

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Փաշինեանի «Միւնիխեան Սկզբունքները»

Փետրուար 15-17, տեղի ունեցաւ Միւնիխի Անվտանգութեան Խորհրդաժողովը, որուն կը մասնակցէին աշխարհի աւելի քան 70 երկիրներու նախագահներ, վարչապետներ, արտաքին գործոց նախարարներ եւ բարձրաստիճան դիւանագետներ: Գլխաւորապէս այս համաժողովին ներկայ էր նախագահ Արմէն Սարգսեանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի մակարդակով: Ներկայ էր նաեւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ: Գլխաւոր նպատակը շրջագիծէն ներս Գլխաւորի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն միջեւ տեղի ունեցաւ հետաքրքիր բանավեճ-քննարկում, որու ընթացքին կողմերը ներկայացուցին զարաբաղեան հակամարտութեան շուրջ իրենց երկիրներու տեսակետները եւ հարցի լուծման եղանակներու մասին իրենց պատկերացումները:

Բանավեճի աւարտին Գլխաւորի վարչապետը ֆէյսպուքեան իր էջին վրայ ներկայացուց գլխաւոր այն 6 սկզբունքները, որոնք իր կողմէ հնչած էին Ալիեւի հետ քննարկման ժամանակ, գանձը անուանելով՝ «Միւնիխեան սկզբունքներ»:

«1. Լեռնային Ղարաբաղը անկախութիւն է ստացել այնպէս, ինչպէս Ատրպէյճանը:

2. Լեռնային Ղարաբաղը կոնֆլիկտի եւ բանակցային կողմ է, առանց որի հետ բանակցելու հնարաւոր չէ լուծել կոնֆլիկտը:

3. Զկան տարածքներ, կայ անվտանգութիւն: Լեռնային Ղարաբաղը չի կարող զիջել իր անվտանգութիւնը:

4. Գնարաւոր չէ կոնֆլիկտը լուծել մէկ կամ երկու գործողութեամբ. բանակցային գործընթացում անհրաժեշտ են «միկրո յեղափոխութիւններ», ապա «միկրո յեղափոխութիւններ», ապա ճեղքում:

5. Գարնի որեւէ լուծում պէտք է ընդունելի լինի Գլխաւորի ժողովրդի համար, Ղարաբաղի ժողովրդի համար, Ատրպէյճանի ժողովրդի համար եւ Գլխաւորին ու Ղարաբաղը պատրաստ են լրջագոյն ջանքեր գործադրել նման լուծում գտնելու համար: Այսպիսի պատրաստակամութիւն պիտի ցուցաբերի նաեւ Ատրպէյճանը:

6. ԼՂ հարցը չունի ռազմական լուծում: Եթէ որեւէ մէկը կասի, որ հարցը ռազմական լուծում ունի, Ղարաբաղի ժողովուրդը կասի՝ ուրեմն այն վաղուց լուծուած է»:

Այսպիսով, առաջին անգամ

«Եթէ Ռեւէ Մեկը Ըսէ, Թէ Կայ Ռազմական Լուծում, Լեռնային Ղարաբաղի Ժողովուրդը Կը Պատասխանէ, Որ Զականարտութիւնը Արդէն Լուծուած Է».

Շաբաթ, փետրուար 15-ին Միւնիխի մէջ կայացաւ Գլխաւորի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի կարճ հանդիպումը:

Հանդիպումէն յետոյ Միւնիխի Անվտանգութեան Համաժողովի շրջագիծէն ներս տեղի ունեցաւ Լեռնային Ղարաբաղի հարցով քննարկում-բանավեճ՝ Գլխաւորի վարչապետի եւ Ատրպէյճանի նախագահի մասնակցութեամբ:

Մտ 45 վայրկեան տեւող քննարկումը վարեց «Ամերիկա-Ռուսաստան» հիմնադրամի նախագահ՝ Մէլեստա Վալանդեր:

Վարչապետի պաշտօնը ստանձնել էտք Նիկոլ Փաշինեան միայն մէկ անգամ պաշտօնապէս բանակցած է Իլհամ Ալիեւի հետ՝ անցեալ տարի Մարտին Վիեննայի մէջ: Սակայն, կարճատեւ հանդիպումներ եւ այլ շփումներ տեղի ունեցած են տարբեր համաժողովներու ընթացքին:

Փաշինեան-Ալիեւ հրապարակային բանավեճ-քննարկումի ընթացքին Գլխաւորի վարչապետը յայտնեց, որ շատ կարեւոր է, որպէսզի միջազգային հանրութիւնը յստակ ընդգծէ, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը չունի ռազմական լուծում:

«Շատ կոնկրետ բան, կայ, որը միջազգային հանրութիւնը կարող



Գլխաւորի վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ բանավեճի ընթացքին

է անել՝ յստակօրէն ընդգծել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը չունի ռազմական լուծում եւ միջազգային հանրութիւնը պէտք է յստակ ու միանշանակ կերպով դա շեշտի», - յայտարարեց Փաշինեան:

Գլխաւորի կառավարութեան ղեկավարը նաեւ նշեց, որ եթէ ոեւէ մէկը ըսէ, թէ կայ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ռազմական լուծում, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կը պատասխանէ, որ այդ հակամարտութիւնը արդէն

լուծուած է: «Գլխաւորի Լեռնային Ղարաբաղը չի ներկայացնում բանակցային գործընթացում, սակայն ես գիտեմ, որ Գլխաւորը եւ Լեռնային Ղարաբաղը պատրաստ են իրա-

Սուրիոյ Խորհրդարանը Ճանչցաւ Զայոց Ցեղասպանութիւնը

Սուրիոյ խորհրդարանը փետրուար 13-ին միաձայն ընդունած է Զայոց ցեղասպանութիւնը ճանչցող եւ դատապարտող բանաձեւը: Այս մասին «Արմենբրես»-ին տեղեկացուցած է լրագրող Սարգիս Գասարճեանը Սուրիայէն:

Խորհրդարանի նիստի օրակարգը կը ներառէր Սուրիա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան յանձնախումբի կողմէ ներկայացուած՝ 20-րդ դարուն Օսմանեան կայսրութեան թուրք իշխանաւորներու կողմէ Զայոց ցեղասպանութեան եւ Սուրիոյ ժողովուրդի այլ ներկայացուցիչներու ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը հաստատող բանաձեւը:

Սուրիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Նորա Արիսեանը նշած է, որ աւելի քան 30 երկրի խորհրդարաններ ճանչցած են Զայոց ցեղասպանութիւնը, իսկ Սուրիոյ խորհրդարանը յատուկ նիստով յարգանքի տուրք մատուցած է 20-րդ դարասկիզբին մեծագոյն ոճիրի զոհերու յիշատակին:

Սուրիոյ խորհրդարանի բարտուղար Ռամի Սալէնը նշած էր, որ թէեւ Սուրիոյ խորհրդարանէն ներս յարգանքի տուրք մատուցած են

Զայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին, սակայն անհրաժեշտ էր ունենալ նման բանաձեւ:

Գլխաւորի մէջ Սուրիոյ դեպի Մոսկուա Հաճ Իպրահիմը կարեւորած է Սուրիոյ կողմէ Զայոց ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը՝ նշելով, որ այն իրագործողներու ժառանգներն այսօր ալ նոյն ոճիրը կ'իրագործեն Սուրիոյ ժողովուրդի նկատմամբ՝ ահաբեկիչներու ձեռամբ: «Ճանաչումը կարեւոր է, քանի որ արաբական երկիրներէն միայն Լիբանանը մինչեւ այժմ ընդունած է Զայոց ցեղասպանութիւնը», - ըսած է ան:

Խորհրդարանի արաբական եւ արտաքին հարցերու յանձնախումբի նախագահ Պուլթրոս Մրճենէն շեշտած է, որ Զայոց ցեղասպանութիւնը պատմական իրողութիւն է, որուն յաջորդած է նաեւ Սուրիոյ հիւսիսային սահմաններուն ասորիներու եւ սիւրիանիներու սպանդը: «Ժամանակն է ճանչնալու եւ դատապարտելու այս անմարդկային արարքներն ու կանխելու գանոնց կրկնութիւնը, յատկապէս որ մեծաթիւ երկիրներ ճանչցած են Զայոց ցեղասպանութիւնը», - յայտարարած է Մրճենէն:



Ընկ. Սուրէն Խուրանեանի Սահը

Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութիւնը խոր ցաւով կը գուժէ անժամանակ մահը իր հաւատաւոր անդամներէն՝

Ընկեր Սուրէն Խուրանեանի Որ պատահեցաւ Գինգաբթի, Փետրուար 13, 2020-ին, յետ անողոք հիւանդութեան:


Ընկեր Խուրանեան պաշտօնավարած է Կուսակցութեան ղեկավար մարմիններէն ներս՝ Գլխաւորի եւ Ամերիկայի մէջ: ՍԴԳԿ պաշտօնաթերթ «Մասիս»-ը շաբաթթերթի էջերով ան հանդէս կու գար քաղաքական-վերլուծական յօդուածներով:

Այս տխուր առթիւ մեր խորագոց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն, ընտանեկան պարագաներուն եւ մեր բոլոր ընկերընկերուհիներուն:

ՍԴԳԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Սարմին

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Կարելոր Կը Համարեն Բանակի Շուրջ Լարուած Մթնոլորտի Բացառումը



Նիկոլ Փաշինեան կը գլխաւորէ իրաւապահ մարմիններու հետ խորհրդակցութիւնը

Բանակի մէջ արձանագրուած մահուան դէպքերու վերաբերեալ կառավարութեան ներս տեղի ունեցած քննարկումէն ետք «կայացուել են մի շարք կարեւոր, այդ թւում քատրային որոշումներ», Ֆէյսպուքի էջին գրած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը, շարունակելով. - «Հարկ եմ համարում ընդգծել, որ 2019 թուականին բանակում արձանագրուած մահուան դէպքերի պատմական նուագագոյն ենք ունեցել: Եւ մեր խնդիրն է այս ընթացքը պահպանել: Սրա համար, սակայն, կարեւոր եմ համարում բանակի շուրջ ջղային մթնոլորտի բացառումը: Չկայ բանակ-հասարակութիւն բաժանում: Մենք մէկ մարմին ենք, մէկ ընտանիք, մէկ օրկանիզմ»:

Վարչապետի նշած պաշտօնանկութիւններու մասին դեռ նախագահական նստավայրէն, ուր գտնուող պէտք է հաստատուին, տեղեկութիւն չկայ: Ըստ մամուլի հրապարակումներու, պաշտօնը կրնան լքել Արցախի պաշտպանութեան նախարար Կարէն Աբրահամեանը եւ Հայաստանի ռազմական ոստիկանութեան պետ Արթուր Պաղտասարեանը, ինչպէս նաեւ Ջինուած ուժերու անձնակազմի հետ տարուող աշխատանքներու վարչութեան պետ Ալիկ Ալեքսանեանը:

Սպասուելիք պաշտօնանկութիւնները, ըստ խորհրդարանի ընդդիմադիր «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար

էտմոն Մարուքեանի, հանրային պահանջի հետեւանք են. - «Հանրութիւնը պահանջում է պաշտօնանկութիւններ՝ լինում են պաշտօնանկութիւններ: Բայց գործելաճի պարագայում ճիշդ կը լինէր, որ իւրաքանչիւր պաշտօնանկութիւնը պատճառաբանուէր, թէ ինչն է եղել պատճառը: Որ ապագայ պաշտօնանկութիւնի համար էլ դա դաս լինէր, եւ քաղաքացիները իմանային, թէ ինչու է ազատուել»:

Արցախի «Ազգային վերածնունդ» ընդդիմադիր կուսակցութեան գործադիր մարմնի անդամ Տիգրան Գրիգորեանի կարծիքով, բանակի հրամանատարութիւնն այս շրջանին լուրջ ընելիք ունի խաղաղ պայմաններու մէջ գոհերու թիւը հնարաւորինս նուազեցնելու կամ բացառելու համար. - «Մենք տեսնում ենք, որ գոհերի մեծամասնութիւնը առաջնում է միջանձնային յարաբերութիւններում տարբեր խնդիրների պատճառով: Տեսնում ենք, որ վերջին շրջանում այդպիսի դէպքերը շատացել են, ուստի բանակի հրամանատարութիւնը պէտք է դիմի բոլոր անհրաժեշտ գործողութիւններին, որպէսզի լուծուի տայ այդ խնդիրներին»:

Ըստ ընդդիմադիրներու եւ իրաւապաշտպաններու, այս տարուան Յունուարէն Ջինուած ուժերու ու Պաշտպանութեան բանակի մէջ խաղաղ պայմաններու մէջ գոհերու թիւը նման կարճ ժամանակահատուածի համար ցնցող էր:

Արցախի Մէջ 2 Ժամկետային Ձինծառայողներ Եւ Ձոհուած Են

Արցախի մէջ երկու զինուոր նահատակուած է: Արցախի պաշտպանութեան նախարարութիւնը նախ յայտնած է մէկ զինծառայողի գոհուելու մասին, ապա տրամադրած է նաեւ երկրորդ մահացած զինծառայողին տուեալները:

«Արցախի Պաշտպանութեան բանակի հարաւ-արեւելեան ուղղութեամբ տեղակայուած զօրամասերէն մէկու պահպանութեան տեղամասին մէջ Փետրուար 12-ին՝ մօտ ժամը 11:30-ին, դեռեւս չպարզուած հանգամանքներու մէջ, մահացու հրազէնային վէրք ստացած է Պաշտպանութեան բանակի զինծառայող, 2000-ի ծնունդ Տիգրան Մանուէլի Մանուէլեանը: Երկրորդ հաղորդագրութեան

մէջ կը նշուի. «Փետրուար 12-ին՝ մօտ ժամը 13:00-ին, ՊԲ հարաւային ուղղութեամբ տեղակայուած զօրամասերէն մէկու պահպանութեան տեղամասին մէջ, դեռեւս չպարզուած հանգամանքներու մէջ, մահացու հրազէնային վէրք ստացած է Պաշտպանութեան բանակի զինծառայող, 2000-ի ծնունդ Տիգրան Յունուարի Միտիլեանը»:

Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը կը կիսէ կորստեան ծանր վիշտը եւ իր զօրակցութիւնը կը յայտնէ մահացած զինծառայողներու ընտանիքներու անդամներուն, հարգապատենքներուն եւ ծառայակիցներուն:

Դէպքերուն առնչութեամբ կը կատարուի քննութիւն:

Հրայր Թովմասեանի Եւ Նորայր Փանոսեանի Դէմ Ապացոյցները Բաւարար Կը Նկատուին

Սահմանադրական դատարանի (ՍԴ) նախագահ Հրայր Թովմասեանի գործը քննող Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅՔԾ) կը հաղորդէ, որ քննչական ծառայութիւնը Թովմասեանի եւ Նորայր Փանոսեանի քրէական գործով ձեռքբերուած ապացոյցները բաւարար համարած է՝ գործով մեղադրական եզրակացութիւն կազմելու եւ դատարան ուղարկելու համար:

Այս մասին տեղեկ պահուած է տուժողներուն, մեղադրեալներուն, անոնց պաշտպաններուն: Գործի նիւթերը տրամադրուած են անոնց՝ ծանօթանալու համար:

Յիշեցնենք, Հրայր Թովմասեանին ՅՔԾ-ն մեղադրանք առաջադրած է պաշտօնէական լիազօրութիւնները չարաշահելու համար: Այն կ'առնչուի անոր արդարադատութեան նախարար եղած ժամանակահատուածին: Ըստ դատախազութեան՝ Թովմասեան «իր հետ քաւոր-սանիկական փոխյարբերութիւնների մէջ գտնուող անձի հետ յանցակցութեամբ» օգտագործելով 2 նոտարներու իրմէ ունեցած կախեալ վիճակը՝ 2013 թուականի Հոկտեմբերին վերջիններու հետ ձեռք բերած է անոնց համար ակնյայտ ոչ շահաւէտ գինով տարածքը վարձակալութեամբ յանձնելու պայմանաւորուածու-



Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասեան

թիւն, որուն հետեւանքով ՍԴ ներկայիս նախագահը այդ երկու նոտարներէն իւրաքանչիւրէն, մինչեւ 2014 թուականի Ապրիլը, ամսական ստացած է 800 հազար դրամ վարձավճար՝ ընդհանուր 11 միլիոն 200 հազար դրամ:

Սանիկը, որուն կը յիշատակէ դատախազութիւնը, Արդարադատութեան նախարարութեան նախկին պաշտօնէայ Նորայր Փանոսեանն է, անոր եւս նոյն մեղադրանքը առաջադրուած է: Հրայր Թովմասեանին իրեն առաջադրուած մեղադրանք չէ ընդունած:

Արթուր Վանեցեանի Դատական Հայցը «Հայկական Ժամանակ»-ի Թերթի Դէմ

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) նախկին տնօրէն Արթուր Վանեցեանը «Հայկական Ժամանակ» օրաթերթի դէմ հայց ներկայացուցած է դատարան: Պատճառը նախորդ ամիս թերթի մէջ հրապարակուած «Պատիւ ունե՞մ, թէ՞ պատիւ չունեմ. Միշիկը, Արթուրը, Արիկը» վերնագրով յօդուածն է, ուր մասնաւորապէս գրուած էր. - «Հայկական ժամանակ»-ի ձեռքի տակ յայտնուել են փաստեր, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ընտանիքի անդամներին, մասնաւորապէս կնոջ՝ Աննա Յակոբեանի եւ դստեր՝ Մարիամ Փաշինեանի դէմ քարոզչական արշաւը, որ իրականացնում են մի քանի լրատուամիջոցներ, համակարգում եւ ներշնչում է ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանեցեանի կողմից: Ընդ որում, հիմքեր կան մտածելու, որ այդ հակաքարոզչութիւնը նաեւ վճարուած է վանեցեանի կողմից»:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը աւելի ուշ կայանի մէջ տուած իր ասուլիսի ժամանակ համացանցային յեղաշրջման փորձի անբաժանելի մաս որակած էր «Հայկական ժամանակ»-ի մէջ նկարագրուած հակաքարոզչութիւնը:

Քաղաքական յայտ ներկայացնող ԱԱԾ նախկին տնօրէնի փաստաբան Արամազդ Կիւրիեանը ըսած է՝ նախքան դատարան դիմելը պահանջած են հերքել ու հերքման գիր հրապարակել, որ, սակայն, վարչապետի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ»-ը չէ ըրած:

«Մեր կողմից ներկայացուել է հայցադիմում, որը որ վերաբերում է եւ հերքմանը, այսինքն՝ հերքման պահանջին, այդ թւում նաեւ՝ որպէսզի յօդուածը հեռացուի, հրապարակուի հերքման գիրը, որը որ նաեւ ներկայացուած է հայցադիմումին կից, ինչպէս նաեւ ներկայացուել է պահանջ՝ ոչ նիւթական վնասի հատուցման վերաբերեալ:

Պօղոս Պօղոսեանի Սպանութեան Գործին Առնչուող Դատախազութեան Դիմումը Վարոյթ Ընդունուած Է

Պօղոս Պօղոսեանի սպանութեան գործով գլխաւոր դատախազի տեղակալի բողոքի հիման վրայ յարուցուած է վերանայման վարոյթ՝ նոր երեւան եկած հանգամանքներով: Այս մասին «Ազատութեան» փոխանցած են Հայաստանի դատական բաժանմունքէն:

Դիմումը մակագրուած է վերաքննիչի դատաւոր Ռուբիկ Միլիթարեանին: Դատական նիստի օր նշանակուած է Փետրուար 27-ը:

Յիշեցնենք, որ Յունուար 23-ին վերաքննիչ քրէական դատարանը ստացած է 2001-ին նախագահ Ռոպերթ Քոչարեանի թիկնապահի կողմէ սպանուած Պօղոս Պօղոսեանի գործով Գլխաւոր դատախազութեան բողոքը:

Գլխաւոր դատախազի տեղակալն աւելի վաղ բողոք ներկայացուցած էր վերաքննիչ դատարան՝ դատավճիռը վերանայելու եւ ամբողջապէս բեկանելու համար: Ըստ Գլխաւոր դատախազութեան՝ Մեծ Բրիտանիոյ քաղաքացի Սիլվերն Նիւթոնի, որ հարցաքննուած էր այդ գործով, ներկայացուցած յայտարարութեամբ պարզուած է, որ առերեւոյթ Պօղոս Պօղոսեանը կեանքին ոչ թէ անզգուշութեամբ գրկուած է, այլ խումբ մը անձանց կողմէ խուլիկանական զրզուծներով դիտաւորութեամբ սպանութեան հետեւանքով:

ԼՈՒՐԵՐ

Գ. Այվազեանը կ'ակնկալէ, Որ ԱՆՃԷյ Քասպշիքը Ատրպէյճանահայերու Յետ Եւս Կը Յանդիպի

Ատրպէյճանահայերու ասամպլէյճի ղեկավար, ատրպէյճանագէտ Գրիգորի Այվազեանը մտահոգիչ կը համարէ Ղարաբաղի ատրպէյճանական համայնքի ներկայացուցիչներու հանդիպումները տարբեր կազմակերպութիւններու եւ դեսպաններու հետ:

Ինչպէս կը տեղեկացնէ «Արմենբրենս»-ը, Փետրուար 18-ին լրագրողներու հետ զրոյցի ժամանակ Այվազեանը նշած է, որ վերջին շրջանին Ղարաբաղի ատրպէյճանական համայնքը աննախադէպ աշխոյժացած է, ինչը չէ եղած մինչ այդ:

«Աւելի մտահոգիչ է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ ղեկավար Անճէյ Քասպշիքի հետ վերջին հանդիպումը: Դա բոլորովին չի բխում միջնորդական առաքելութեան չէզոքութեան սկզբունքից», - ըսած է Այվազեանը:

Այվազեանն ըսած է, թէ հաշուի առնելով, որ Ղարաբաղի ատրպէյճանական համայնքի թիկունքին կանգնած է Ատրպէյճանի իշխանութիւնը, ատրպէյճանահայութիւնը իրաւասու է նախ եւ առաջ ակնկալել ԵԱՀԿ համախառնագաներէն չէզոքութեան պահպանում եւ համանման հանդիպումներու շարքի կազմակերպում նաեւ ատրպէյճանահայ վտարանդի համայնքի ներկայացուցիչներու հետ:

«Բացի այդ, ակնկալում ենք, որ Հայաստանի պետութիւնը կը



Ատրպէյճանահայերու ասամպլէյճի ղեկավար Գրիգորի Այվազեան

մշակի Արցախի հիմնախնդրում ատրպէյճանահայութեան հարցով հայեցակարգ: Պետութեան օգնութեան ակնկալիքն ունենք այս պարագայում, որովհետեւ դժուար է պատկերացնել, որ Քասպշիքը մէկ օրում է որոշել թուրալ կանձալիւնի հետ հանդիպել, կամ էլ կանձալիւնը պատահաբար է յայտնուել Միլլի Մեճլիսում (խորհրդարանում)՝ որպէս ընտրուած պատգամաւոր: Ի հարկէ, դրա թիկունքում պետութիւնն է կանգնած: Դրա համար ակնկալում ենք մեր պետութեան կողմից ատրպէյճանահայութեան հիմնախնդրի առաջ քաշումը բանակցային սեղան», - ընդգծած է Այվազեանը:

Հայամէտ Թուրք Գործիչ Օսման Քաւալա Ազատ Արձակուելէն Ետք Դարձեալ Ձերբակալուեցաւ



Հայամէտ թուրք հասարակական գործիչ Օսման Քաւալան

Պոլիս քաղաքի ծանր յանցագործութիւններու բաժանմունքի որոշմամբ ազատ արձակուեցաւ «Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութիւնը տապալելու փորձ ընելու» մէջ մեղադրուող հասարակական գործիչ Օսման Քաւալա, սակայն մի քանի ժամ ետք ան կրկին ձերբակալուեցաւ՝ մէկ այլ մեղադրանքով:

Օսման Քաւալան յայտնի հասարակական գործիչ է: Հիմնադրած է եւ երկար տարիներ ղեկավարած է «Anadolu Kultur» հիմնադրամը՝ տարիներ շարունակ իրականացնելով նաեւ հայկական մշակույթի ներկայացնող միջոցառումներ: Քաւալան ընդունած է Հայոց ցեղասպանութեան փաստը եւ խստիւ

դատապարտած ան: Քաւալան աշխոյժօրէն մասնակցած է 2013-ի ամրան կեզի զբօսայգիի հակակառավարական ցոյցերուն: Ան կալանաւորուած էր 2017-ի Դեկտեմբերին: Կը մեղադրուէր 2016-ի ռազմական յեղաշրջման փորձին մասնակցութիւն ունենալու մէջ: Բազմաթիւ թրջական եւ միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններ իրենց բողոքի ձայնը բարձրացուցած էին՝ Քաւալայի ապօրինի կալանքին վերջ դնելու պահանջով:

Օսման Քաւալայի արդարացման եւ ազատ արձակման որոշումը կայացաւ եւս էր 840-օրեայ կալանքէն ետք՝ 2020-ի Փետրուար 18-ին:

Հայաստան-Գերմանիա Յարաբերութիւնները Արագօրէն Կը Զարգանան. ԱՆԿԵԼԱ ՄԵՐՔԷԼ



ԱՆԿԵԼԱ ՄԵՐՔԷԼ-Փաշինեան համդիպումը Պեռլինի մէջ

Հայաստան-Գերմանիա յարաբերութիւնները կը զարգանան բաւական բուռն կերպով: «Արմենիա» կը հաղորդէ, թէ Պեռլինի մէջ ՉԼՄ-ներու համար եղած յայտարարութեան ժամանակ, այս մասին նշած է Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքէլը:

«Հայաստանի մէջ կատարուած են մեծ փոփոխութիւններ: Փոփոխութիւններ կը կատարուին այսօր իրաւական համակարգի մէջ: Մենք համոզուած ենք, որ այդ մէկը դիւրին գործ չէ, եւ Հայաստանին յաջողութիւն կը մաղթենք այդ գործին մէջ», - ըսած է Անկելա Մերքէլը: Ան վերջիւ շարժեց է իր այցելութիւնը Հայաստան եւ ընդգծած, որ տպաւորուած էր «ԹՈՒՄՕ» կեդրոն այցելութեամբ: Այդ այցելութիւնը իր արդիւնքը տուած է, եւ Անկելա Մերքէլ տեղեկացուցած է, որ աշխարհի Պեռլինի մէջ եւս պիտի բացուի «ԹՈՒՄՕ» կեդրոն: Ան նշած է, որ բուռն համագործակցութիւնը կը շարունակուի տարբեր ոլորտներու մէջ: Նկատած է, որ Հոկտեմբերին Գերմանիոյ մէջ կայացած է տնտեսական համաժողով, որ նոր էջ բացած է հայ-գերմանական յարաբերութիւններուն մէջ:

Անկելա Մերքէլ կարեւոր համարած է Աֆղանիստանի մէջ Հայաստանի խաղաղապահներու առաքելութիւնը եւ շնորհակալութիւն յայտնած ատոր համար: Ան նշած է,

որ Հայաստանի իր գործընկերոջ հետ հանդիպումը պիտի շարունակուի յազեցած օրակարգով, անդրադարձ պիտի կատարուի նաեւ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններուն:

Գերմանիան այն հզօր կամուրջներէն մէկն է, որ կը կապէ Հայաստանը Եւրոպական Միութեան, եւրոպական քաղաքակրթութեան եւ մշակույթին հետ: Այս մասին յայտարարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ Բեռլինի մէջ համատեղ յայտարարութեան ընթացքին:

«Գերմանիան Հայաստանի մտերիմ բարեկամն ու գործընկերն է, եւ մենք զգում ենք այդ բարեկամութեան ուժը եւ զգացական, եւ գործնական առումներով: Այսօր վստահութեամբ կարող ենք արձանագրել, որ մեր բարեկամութիւնը հիմնուած է ընդհանուր արժեքների վրայ: Դրանք միաւորում են մեր երկու երկրները եւ յուսալի հէնք են ծառայում ամենատարբեր ոլորտներում համագործակցութիւն ծաւալելու համար», - ըսած է վարչապետ Փաշինեանը:

Ան նկատած է, որ իր պաշտօնավարումէն ի վեր, վերջին մէկ ու կէս տարուան ընթացքին, Գերմանիոյ վարչապետի հետ կը հանդիպի արդէն երրորդ անգամ, որ ինքնին խօսուել փաստ է եւ կը վկայէ երկկողմ յարաբերութիւններու բարձր մակարդակի մասին:

Հնդկաստանի Դեսպանատունը Առաջարկած Է Երեւանի Մէջ Տեղադրել Կանտիի Արձանը

Հայաստանի մէջ Հնդկաստանի դեսպանատունը առաջարկած է Երեւան քաղաքի մէջ տեղադրել հնդիկ քաղաքական եւ հոգեւոր առաջնորդ Մահաթմա Կանտիի արձանը անոր 150-ամեակի կապակցութեամբ: Արձանի տեղադրման համար առաջարկուող վայրերն են Օղակաձեւ զբօսայգին կամ Հանրապետական հիւանդանոցի յարակից զբօսայգին: Երեւանի աւագանիի անդամ Լեոն Զաքարեանը Ֆեյսպուքի իր էջին գրած է. «Մեզ առաջարկ է եկել Հնդկաստանի դեսպանատան կողմից, ըստ որի առաջարկում է Երեւան քաղաքում տեղադրել Մահաթմա Կանտիի արձանը:

Առաջարկուող վայրերն են Օղակաձեւ զբօսայգում կամ Հանրապետական հիւանդանոցի յարակից զբօսայգում:

Նկարում առաջարկուող տարբերակն է:

Մահաթմա Կանտիի 150 ամեակի կապակցութեամբ 2019-ի Հոկտեմբեր 2-ին մեկնարկած է Տեյլից



Հնդիկ քաղաքական եւ հոգեւոր առաջնորդ Մահաթմա Կանտի

մինչեւ ժենեւ կազմակերպուող «Շարժուելով դէպի ազատութիւն եւ խաղաղութիւն խորագրով» մէկամեայ քայլերի, որն անցնելու է նաեւ Հայաստանով եւ Արցախով: Քայլերի մասնակիցները այժմ գտնուում են Հայաստանում»:

Մեկնարկեց Սահմանադրական Հանրաքուլի Քարոզարշավը



Փետրուար 17-ին մեկնարկած է Հայաստանի սահմանադրական փոփոխություններու հանրաքուլի քարոզարշավը: Քարոզարշավը պիտի շարունակուի մինչև Ապրիլ 3-ը:

«Արմենբիբլես»-ի փոխանցմամբ՝ իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունն արդեն ձեռնարկած է «Այո»-ի շտապը. այն կը ղեկավարէ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքներու նախարար Սուրեն Պապիկյանը:

Պատգամաւորներու կողմէ «Ոչ»-ի շտապ ձեռնարկելու ժամկէտը լրացաւ փետրուար 17-ին եւ խորհրդարանական ուժերէն որեւէ մէկը «Ոչ»-ի շտապ ձեռնարկելու մասին չյայտարարեց:

Խորհրդարանական «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան քաղաքական խորհուրդը որոշած է, որ կուսակցութիւնը պիտի չմասնակցի Սահմանադրութեան փոփոխություններու հանրաքուլի կայացման գործընթացին: Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան քաղաքական խորհուրդի՝ Փետրուար 15-ին կայացած նիստին ետք լրագրողներու հետ գրոյցի ժամանակ այս մասին յայտնած է կուսակցութեան անդամ Նայիրա Զոհրապետը:

Փետրուար 18-ի առաւօտեան ձեռնարկուած է սահմանադրական փոփոխություններու Ապրիլ 5-ի հանրաքուլի «Ոչ»-ի շտապ:

Երբ սպառնացաւ խորհրդարանական ուժերուն տրուած ժամա-

նակը, «Ոչ»-ի արշաւ սկսելու մասին յայտարարեց քաղաքացիական նախաձեռնութիւնը: Կեդրոնական ընտրական յանձնաժողով դիմած են գործող իշխանութիւններու քննադատութեամբ յայտնի խումբ մը իրաւաբաններ:

Յուշակը կը գլխաւորէ Արցախի նախկին մարդու իրաւունքներու պաշտպան, «Իրաւական ուղի» հասարակական կազմակերպութեան համահիմնադիր Ռուբէն Մելիքեանը: Ան իր ֆեյսպուքեան էջին ներկայացուցած է ցուցակի առաջին տասնեակը, ուր տեղ գտած են նաեւ Գոհար Մելոյեանը, Արսէն Բաբայեանը, Էլինար Վարդանեանը, Տիգրան Աթանեսեանը, Ասողիկ Մաթեոսեանը, Արտակ Ասատրեանը, Սիրանուշ Սահակեանը, Անահիտ Սարգսեանը եւ Արսէն Մկրտչեանը:

Արտախորհրդարանական քաղաքական ուժերը եւս «Ոչ»-ի քարոզչութիւն իրականացնելու մասին չեն յայտարարած: Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը յայտարարած է, որ որեւէ կերպ պիտի չմասնակցի գործընթացին, ՀՅԴ-ն հանրաքուլէն պոչքոթելու կոչ ւրած է:

Սահմանադրական փոփոխություններու հանրաքուլէն պիտի կայանայ Ապրիլ 5-ին: Հանրաքուլէով կ'առաջարկուի դադարեցնել Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասեանի եւ դատարանի 6 անդամներու պաշտօնավարումը:

Փաշինեանի «Միւնիխեան Սկզբունքները»

Շարունակուած էջ 1-էն

ըլլալով Հայաստանի ղեկավարը Հայ ժողովուրդի եւ միջազգային հանրութեան առջեւ ներկայացուց այն շրջագիծը, որոնց հիման վրայ պէտք է ընթանան հետագայ բանակցութիւնները:

Բանավեճի աւարտին Հայաստանի վարչապետին խորհուրդ տուողներու պակաս չկար: Պէտք է յիշել Պաքուի եւ Սոււրիայի քարոզերը, պէտք է խօսել Թալիշ գիւղի ողբերգութեան մասին, պէտք է յիշել Սաֆարովի կողմէ Հայ սպայի կացինահարման մասին, 19-րդ դարու պատմականը պէտք է ներկայացնել, ոտքի ելել ու հեռանալ, քանի որ Ատրպէյճանի ցախագահը կը վիրաւորէ Հայ ժողովուրդին եւ մասնաւորապէս կ'արտայայտեն շատ մը քաղաքական ու հասարակական գործիչներ, առանց հասկնալու, որ քննարկումը անցեալի պատմու-

թեան մասին չէր եւ ներկայ եղող դիւանագետներն ու միջազգային փորձագետները եկած էին լսելու կողմերու տեսակետները՝ շարունակուող հակամարտութեան լուծման հնարաւորութիւններուն մասին:

Հրապարակային այս քննարկումը, ընդհանուր առմամբ դրական էր Հայաստանի համար, մանաւանդ որ, Ատրպէյճանի նախագահը հակափաստարկներու պակասէն կը տառապէր եւ անդադար կը կրկնէր նոյն սկաւառակը՝ «մեր գրաւեալ տարածքները վերադարձուցէք եւ ամէն ինչ լաւ կ'ըլլայ»:

»Միւնիխեան Սկզբունքներու« ներկայացմամբ կը յուսանք որ, վերջ կը տրուին ներքին այն խօսակցութիւններուն ու պնդումներուն, թէ Հայաստանի վարչապետը կը պատրաստուի արգատագրուած հողերը յանձնելու Ատրպէյճանին:

«ՄԱՍԻՍ»

Հայաստանը կը Բանակցի Վրաստանի Հետ Դեպի ԱՄՆ Համատեղ Ուղիով Թռիչք Բանալու



Քաղաքացիական օդանավաւթութեան կոմիտէի ղեկավար Տաթևիկ Ռեւազեանը խորհրդարանէն ներս յայտնած է, որ աշխատանքներ կը տարուին Երեւանէն Լոս Անճելըս թռիչքներու կազմակերպման ուղղութեամբ: Պատասխանելով ուղիղ թռիչք բանալու հնարաւորութեան մասին ԱԺ փոխիւօսնակ Ալեն Սիմոնեանի հարցին՝ Ռեւազեանը նշած է, որ ուղեւորահոսքը բաւարար չէ ուղիղ թռիչք կազմակերպելու հա-

մար, որովհետեւ օդանավային ընկերութեան ձեռնառու չըլլար շաբաթական մէկ թռիչք կատարել, այլ անհրաժեշտ է նուազագոյնը 2-3 թռիչք:

Այս հարցով Հայաստանը կը բանակցի Վրաստանի հետ թռիչքը համատեղ կազմակերպելու համար, սակայն խնդիրն այն է, որ Վրաստանի մէջ կ'ուզեն թռիչք բանալ դէպի Նիւ Եորք, իսկ Հայաստանի մէջ՝ Լոս Անճելըս:

Լեռնային Ղարաբաղի Ժողովուրդը Կը Պատասխանէ

Շարունակուած էջ 1-էն

կան ջանք գործադրել մեր տարածաշրջանում յարատեւ խաղաղութիւն ստեղծելու համար: Եւ որպէս Հայաստանի վարչապետ, այս իրավիճակը համարում եմ ոչ միայն իմ պատասխանատուութիւնը յանուն իմ երկրի անվտանգութեան, այլ նաեւ գիտակցում եմ իմ պատասխանատուութիւնը տարածաշրջանի անվտանգութեան համար, համաշխարհային, գլոբալ անվտանգութեան համար: Եւ ես առաջարկում եմ նախագահ Ալիեւին այս իրավիճակն ընկալել որպէս մեր երկուստեք խնդիրը, անելիքը: Այն է՝ ձեռնարկել յարատեւելի խաղաղութիւն եւ կայունութիւն ու այս իրավիճակը դիտարկել ոչ միայն որպէս մեր ազգային օրակարգի հիմնախնդիր, այլ նաեւ որպէս գլոբալ ու տարածաշրջանային անվտանգութեան օրակարգի խնդիր», - ըսաւ Փաշինեան:

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը հակադարձելով Նիկոլ Փաշինեանին՝ ըսաւ. «Միջազգային հանրութիւնը առաջինը պէտք է բացատրի, որ Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճան է եւ երկրորդը՝ լուրջ ճնշում գործադրէ ազդեցութիւններով»:

Փաշինեանը նշեց, որ ինչ կը վերաբերի ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի փաստաթուղթերուն, այդ փաստաթուղթերու ընդհանուր իմաստն է՝ առանց պայմաններու եւ անյապաղ հաստատել հրադադար, այսինքն՝ դադարեցնել որեւէ բռնութիւն եւ դադարեցնել ռազմական գործողութիւն-

ները: «Առաջին հերթին Ատրպէյճանն է, որ չի պահել, չի յարգել Անվտանգութեան Խորհրդի փաստաթղթի պայմանները», - շեշտեց Փաշինեան:

Հայաստանի վարչապետն ըսաւ, որ երբ կը խօսուի տարածքային ամբողջականութեան մասին, պէտք է որոշուի՝ որ երկրի տարածքային ամբողջականութեան մասին է խօսքը:

«Հարցը նա է, որ եթէ Ատրպէյճանը յարգում էր Խորհրդային Միութեան տարածքային ամբողջականութիւնը, դառնալով անկախ պետութիւն՝ ինչպէ՞ս էր յարգում այդ տարածքային ամբողջականութիւնը, թէեւ Ատրպէյճանը դուրս եկաւ Խորհրդային Միութիւնից նոյն կերպ, ինչպէս Լեռնային Ղարաբաղը դուրս եկաւ Խորհրդային Միութիւնից», - ըսաւ Փաշինեան:

Հայաստանի վարչապետն աւելցուց. «Նախագահ Ալիեւն ասում է, թէ Լեռնային Ղարաբաղը բանակցութիւնների եւ համարարութեան կողմ չէ, բայց Ատրպէյճանը երկու անգամ համաձայնագրեր է ստորագրել Լեռնային Ղարաբաղի հետ: Առաջին անգամ 1994 թուականին եւ դա հրադադարի համաձայնագիրն էր Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի միջեւ: Պաշտպանութեան նախարարներն են ստորագրել այդ փաստաթուղթը: Դրանից երեք ամիս անց 1994 թ. Յուլիսին իրենք վերահաստատել են, որ հրադադարը պահպանուելու է այնքան, մինչեւ կոնֆլիկտը ստանայ քաղաքական լուծում»:

Բանակցի Մասին

Շարունակուած էջ 2-էն

Իշխանութիւնները պարտաւոր են սա անել, հակառակ դէպքում չեն կարողանալու փակել կասկածները եւ քաղաքական շահարկումները Պանդորայի արկղը, ինչն անդառնալի վնաս է հասցնե-

լու թէ բանակին, թէ Հայաստանի եւ Արցախի անվտանգութեանը: Բանակն այն համակարգն է, որը շահարկումների եւ կասկածների տեղ չպիտի տայ, եւ դա ապահովելն իշխանութիւնների պարտաւորութիւնն է:

«Ի ԼՈՒՐ»

Էրտողանը, Լիպիան Եւ Արաբական Աշխարհը



ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Նորութիւն մը բերած կամ գաղտնիք մը յայտնած պիտի չըլլանք, եթէ պարզենք, թէ Թուրքիոյ նախագահ Էրտողան կ'երագէ եւ կը ջանայ վերականգնել Թուրքիոյ օսմանական փառքերը եւ յատկօրէն կ'արտայայտուի անոր մասին, սակայն այդ երագները կեանքի կոչելու իր ջանքերը պիտի չիրականանան, որովհետեւ անոնք կը բխին այն գաղափարական խորքերէն, որոնք կը ձգտին վերականգնել պատմութիւնը, երբ այդ մէկը անհնար է:

Էրտողանի կարծիքով, Թուրքիան մեծ պետութիւն մըն է, որ տիրապետութիւն պէտք է ունենայ Միջերկրականի մէջ, ուր Յունաստան, Եգիպտոս, Իսրայէլ եւ Կիպրոս կը ջանան ծովի խորքի քարիւղի ու կազի պաշարներէն օգտուիլ: Ներկայիս, ան Քաթարի նւթական աջակցութեամբ նոր արկածախնդրութեան մը սկսած է Լիպիոյ մէջ, նախ այնտեղի իրադարձութիւններու բեմին վրայ իր տեղը ապահովելու համար, ապա Լիպիոյ քարիւղի եւ կազի աղբիւրներուն հասնելու, ինչպէս նաեւ Թուրք կապալառուներու աշխատանքներուն արդիւնք ձգձգուած իրաւունքները ապահովելու (որոնք Քաթարի անկումէն ետք չեն վճարուած, իսկ խօսքը երկու միլիառ տոլարի մասին է):

Էրտողան Լիպիոյ վարչապետ Ֆայէզ Սաուաճի հետ ստորագրած է փոխհասկացողութեան յուշագիր մը, որ կը յտակացնէ Միջերկրական ծովէն իրենց մասնաբաժինները՝ երկու երկիրներու փերուն միջեւ: Այդ յուշագիրով Թուրքիան կը ջանայ վտանգել եւ հատել տարածաշրջանի ծովային աշխարհագրութիւնը, ուր, սակայն, Յունաստան, Կիպրոս եւ Եգիպտոս հետախուզման ծրագիրներ ունին եւ այդ գծով կը վայելեն Միացեալ Նահանգներու, Եւրոմիութեան եւ Իսրայէլի աջակցութիւնը: Լիպիոյ Ազգային բանակի հրամանատար Խալիֆա Հաֆթեր խոստացած է խզել այդ համագործունէութիւնը, եթէ ինք իշխանութեան գլուխ հասնի:

Լիպիոյ հարցով նախագահ Էրտողանի մօտեցումը կը կրէ նոյն իր միջազգային քաղաքականութեան հանդէպ որդեգրած ընդհանուր մօտեցման բնոյթը: Թուրքիոյ խորհրդարանը արդէն իսկ վաւերացուցած է նախագահին ծրագիրները Լիպիոյ գծով, եւ կը թուի, թէ անոր աջակիցները շատ հիացած են իր մղած պայքարով: Ըստ Էրտողանի քաղաքական հարցերու խորհրդական Իպրահիմ Քալինի՝ նախագահը իր արդիւնաւէտ եւ հեռատես դիւանագիտութեամբ Թուրքիան դարձուց գլխաւոր դերակատարներէն մէկը Լիպիոյ մէջ:

Էրտողան համոզուած է, թէ

Թուրքիան՝ Օսմանեան կայսրութեան ժառանգորդը ըլլալով, պէտք է անոր փառքերը վերակենդանացնէ, ուստի նոյն այդ օսմանցիներուն գէնքը՝ կրօնքը գործածելով, ան կը ջանայ նոր կայսրութիւն մը հիմնել: «Ճիշատ»՝ Աստուծոյ սիրոյն իսլամներու մղած պատերազմը, կարեւոր հարց մըն է Էրտողանի պահպանողական ընտրատարածքին մէջ եւ ի հարկ է նաեւ ինքնին

Էրտողանի համարգ արդարեւ, ան շատ գործօն կերպով կ'օգտուի այդ գաղափարէն՝ մոլեռանդ իսլամներու միտքերուն մէջ հերոսի տպաւորութիւն ձգելով, ինչպէս Լիպիոյ Մարաթէ քաղաքի հրամանատար առաջնորդ Ֆարաճ Մուսթաֆա ըսած էր:

Էրտողան սակայն կը վազէ անհասանելի իսլամական կայսրութեան մը երագանքին ետեւէն, այդ մէկը անհնար է, քանի որ Թուրքիոյ տնտեսութիւնը ներքնապէս արագընթաց փլուզումի մէջ է: Շատ դժուար պիտի ըլլայ շարունակել Էրտողանի յիշեալ արկածները՝ նոյնիսկ Քաթարի նման հարուստ երկրի մը աջակցութեամբ: Միւս կողմէ, Թուրքիոյ բանակն ու օդուժը մեծ հարուածներ ստացան ինքնին Էրտողանէն, 15 Յուլիս 2016ի անյաջող յեղաշրջումէն ետք, եւ տակաւին ամբողջովին չեն վերականգնած գհետեւաբար, Թուրքիան կրնայ խնդիրներ յառաջացնել Լիպիոյ մէջ, բայց պիտի չյաջողի արդիւնքի մը հասնիլ:

Քաթարէն բացի ո'չ մէկ երկիր կ'աջակցի Թուրքիոյ: Ալճերիան եւ Թունիզը դրական կը գնահատեն Թուրքիոյ կեցուածքը, իրենց երկիրներու «Իսլամ եղբայրներ»

խմբակցութեանց ազդեցութեան տակ, սակայն անոնք չեն օժանդակեր անոր ռազմական գործողութիւններուն, մինչդեռ Թուրքիոյ համար անհնար է որեւէ աջակցութիւն ցուցաբերել Լիպիոյ կառավարութեան ղեկավար Ֆայէզ Սաուաճին՝ առանց Թունիզի օդային ու ծովային օժանդակութեան: Եգիպտոսը, Մէուտական Արաբիան եւ Արաբական Միացեալ Էմիրութիւնները նեցուկ կը կանգնին Լիպիոյ բանակի գորավար Խալիֆա Հաֆթերին, նմանապէս՝ Ռուսիան, Ֆրանսան եւ Իտալիան: Իսկ Միացեալ Նահանգներու նախագահ Թրամփ ղէմ է Թուրքիոյ միջամտութեան Լիպիոյ հարցով, ի տարբերութիւն Սուրիոյ իրավիճակին, ինչպէս նաեւ ղէմ են Եւրոմիութեան անդամները:

Լիպիոյ հարցով Պերլինի համաժողովի մասնակիցները չաջակցեցան Էրտողանի այդ առաջարկին, որ կը ձգտէր թրքական բանակը միջամուխ ընել Լիպիոյ հակամարտութեան՝ Սաուաճին օգնութեան հասնելու պատրուակով գաւելին, անոնք խստիւ արգիլեցին արտաքին որեւէ ռազմական միջամտութիւն գաւելին, որ գալլոյթ

Շար.ը էջ 19

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱԵՐՍԻՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Cordially invites you to

Spring Brunch

Benefitting the
AEBU Scholarship Fund
Empowering Our Youth for a Brighter Future


Sunday
March 22, 2020
Starting at 10:30 am

AEBU CENTER
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

To Reserve your tickets please call
626•344•7321
or
818•281•0351

Donation \$50

Հայաստան՝ Գիտարուեստի Կեդրոն



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Ամերիկեան հոշակաւոր Forbes երկշաբաթաթերթի Յունուար 2020 թիւին մէջ Wade Shepard-ի "Welcome to Armenia - The world's next tech hub" վերնագրով յօդուածը կ'ուռեցնէ ամէն մէկ հայու կուրծքը՝ կարդալով օտարի աչքով դիտուած իրավիճակի մը մասին, որ Հայաստանը կը նկատէ գիտարուեստի ապագայ կեդրոն մը աշխարհի մէջ:

Ազրպէյճանի, Վրաստանի եւ Թուրքիոյ միջեւ ուռնացող ու զարգացող մեծ կառուցուածքային գործակցութեան ի տես, որուն օրինակներէն մէկն էր 30 հոկտեմբեր 2017 թուականին գործի դրուած երկաթուղագիծը, որ Պաքու-Թիֆլիս-Կարս գիծով Կասպից ծովը կը կապէր արեւելեան Թուրքիոյ եւ անկէ ալ Եւրոպայի հետ՝ շրջանցելով Հայաստանը եւ զայն գրկելով այդ գիծին ընծայած օգուտներէն ու շահաբաժիններէն, - Forbes-ի յօդուածը կ'ըսէ, թէ Հայաստան «փոխանակ ճարտարարուեստականացումի կամ նոր մետաքսեայ ճամբու մը մէջ գլուխը մխրճելու, իր գրաւը դրած է ուրիշ մարզի՝ գիտարուեստի վրայ»:

Թուրքիոյ եւ Ազրպէյճանի կողմէ երկաթուղագիծին բացումը Հոկտեմբեր 30-ին կատարելը յատկանշական բնոյթ կը ստանար, որովհետեւ Թուրքիա Կարսը գրաւած էր 1920-ի հոկտեմբեր 30-ին՝ զայն անջատելով Հայաստանի առաջին Հանրապետութենէն: Այդ խորհրդանշական երեւոյթը վստահաբար կը մղէ երիտասարդութիւնը Հայաստանի, որ փակ սահմաններէն վեր ճախրելով՝ ցոյց տայ աշխարհին, թէ վերածնունդ ապրող հայութիւնը իր հանճարին ու մտքին ուժովը սահման չի ճանչնար եւ պատրաստ է իր գիտարուեստով «գրաւելու» աշխարհը:

Forbes կ'ըսէ. «Թէեւ Հայաստան երկար տարիներ մեծ քայլերով յառաջ կ'երթար բարձր գիտարուեստի (high-tech) ուղիով, սակայն թափը իսկապէս սկսաւ արդիւնք տալ 2018-ի «Թաւշեայ յեղափոխութեամբ»: Յանկարծ փոքր, աննշան երկիրը, պահուելու աշխարհի քարտէսին խոր կեդրոնը, դարձաւ լեցուն յոյսով եւ դէպի յառաջ զացող ապագայի մը տեսիլքով, որ փայլուն կ'երեւի անսովորաբար»:

Forbes-ի փայլուն ապագայ գուշակող գրութեան արձագանգողը դարձաւ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան խօսնակը՝ ըսելով. «Մենք շահի քիչ աղբիւրներ ունինք, եւ բարձր գիտարուեստը հիմնական ուղղութիւն կը նկատենք հայկական սնտե-

սութիւնը ամրապնդելու, պաշարումն ու շրջափակումը յաղթահարելու, եւ մեր կրթական ու դաստիարակչական վաճառանիշերը արտածելու»:

Փետրուար ամսու կիսուն, երբ մեր շուրջը ամէն մարդ սիրաբանութեան օրով (Valentine's Day) տարուած վարդեր, համբոյրներ ու նուէրներ կը փոխանակէ, պատշաճութիւնը գուցէ կը պահանջէր, որ այդ նիւթին մասին ըլլար մեր այս յօդուածը: Սակայն Հայաստանը փառաբանող ու վարկը բարձր դասող Forbes-ի յօդուածը, ամէն հայու գնահատանքին արժանի դառնալու սիրաբանութեամբ, մեզ մղեց, որ այս յատկանշական օրուան առթիւ մեր սիրոյ արտայայտութիւնը ուղղենք մեր հայրենիքին՝ Հայաստանի, որու մեծարումն ու յաջողութիւնը վառ ապագայի մը սիրով կը լեցնեն մեր սրտերը՝ ետին ձգելով մեր ողբայի մուսլ անցեալը եւ ներկայ երթը դարձնելով յուսադրիչ:

Գերման կայսերապաշտութեան եւ ցեղապաշտութեան կողմէ անցեալին ծրագրուած ու կատարուած ցեղասպանութեանց գոհ դարձած հայ եւ հրեայ ժողովուրդներու պետական հիմնարկները, իրենց սահմաններով եւ ժողովրդային փոքր թիւերով, գիտցած են, որ գիտութեամբ միայն կարելի է անհաւասար ուժի դէմ կանգնիլ եւ անով գինուած՝ ինքնապաշտպանուիլ:

Իսրայէլ իր գիտական բարձր մակարդակով դարձած է միջագայնօրէն ընդունուած եւ ճանչցուած յառաջադէմ երկիր մը: Հայաստանն ալ, Իսրայէլի նման, իր գիտական բարձր մակարդակով եւ աշխարհ ատարած Սփիւռքով, ունի բոլոր տուեալները մօտ ապագային իր արժանի դերն ու ներկայութիւնը ունենալու միջազգային գետնի վրայ: Արդէն շատ մը գիտարուեստի աշխարհահռչակ հսկայ ընկերութիւններ, ինչպէս Intel, Microsoft, Google, IBM, Synopsys եւ Cisco, Հայաստանի մէջ ունին իրենց սեփական գրասենեակները՝ զայն նկատելով կարելոր գիտարուեստի կեդրոն ամբողջ կովկասի տարածքին:

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր փոքր երկիրները կը ծառայեն որպէս խաղաքարտ մեծ երկիրներու քաղաքական ու տնտեսական հաշիւներու սեղանին վրայ: Անոնց խաղին ենթակայ չդառնալու լաւագոյն միջոցը սեփական ուժին վստահելն է՝ ինքնազարգացումով եւ գիտութեան կեդրոն դառնալով, որուն առջեւ եւ որուն հետ կը խոնարհին ու կը գործակցին մեծ ուժերը՝ իրենց շահերուն եւ ծրագրերուն կարող գործընկեր գտնե-

Իմ Հակառակորդ Թուրք Մարզիկն Աւելի Շատ Հայկական Հիմն Լսած Է, Քան Թրքականը. Արթուր Ալեքսանեան



Ամառնային ողիմպիական խաղերուն ընդառաջ, յունահռոմէական ոճի ըմբիշներ, աշխարհի եռակի ախոյեան, Եւրոպայի հնգակի ախոյեան Արթուր Ալեքսանեանն ու Կարապետ Չալեանն առաջիկայ օրերուն պիտի մեկնին մարզական հաւաքներու: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնքրես»-ը, այս մասին մարզիկները յայտնած են Փետրուար 17-ին լրագրողներու հետ ձեպագրոյցի ժամանակ:

Անդրադառնալով Հռոմի մէջ կայացած առաջնութեան՝ Արթուր Ալեքսանեանը նշած է, որ միակ մտավախութիւնն այդ մրցումներու ժամանակ Ողիմպիական խաղերուն ընդառաջ վնասուածք ունենալն էր: «Մնացածը՝ լաւ մարզավիճակում էի, ինձ լաւ էի գտնւմ: Գօտեմարտել եմ իմ հիմնական մրցակիցների հետ ու բոլորին լաւ ճանաչում էի», - նշած է Արթուր Ալեքսանեանը: Անդրադառնալով թուրք եւ ատրպէյճանցի երկրպագուներու եւ թուրք մարզիկի պահուածքին՝ յաղթական պատուոյ հարթակի վրայ մէջքով հայկական դրօշին կանգնելուն, մարզիկը նշեց, որ այդ պահուածքը կարելոր չէ: «Այդ ժամանակ ես չեմ տեսել, ինձ յետոյ ասացին, բայց, եթէ նոյնիսկ նրանք դէմքով չըջուեցին դրօշին, հայոց հիմնը լսեցին: Իմ հակառակորդ ատրպէյճանցի մար-

զիկն աւելի շատ հայկական հիմն է լսել, քան թրքականը: Այնպէս որ, նրանց մէջքով շրջուելը կարելոր չէ», - նշած է Արթուր Ալեքսանեանը՝ տեղեկացնելով որ դահլիճին մէջ շատ եղած են հայ երկրպագուներ, անոնց շարքին՝ նաեւ Ֆուլպոլի Հայաստանի հաւաքականի առաջատար Հենրիկ Մխիթարեանը, որ իրեն աւելի ոգեւորած է:

Կարապետ Չալեանն ալ խոստացած է Ողիմպիական խաղերուն չչտապել: «Կ'աշխատեմ ողիմպիական մրցումների ժամանակ չչտապել, հենց այդ շտապելն է որ խանգարում է ինձ յաղթել», - անկեղծացած է Չալեանը: Խօսելով Եւրոպայի առաջնութեան իր մրցակիցներու մասին՝ Կարապետ Չալեանը նշած է, որ բաւական բարդ էր. «Բոլորը փորձառու ըմբիշներ էին, դժուար էր գօտեմարտելը, բայց փա՛ռք Աստուծոյ, առանց մետալ չվերադարձայ»:

Իտալիոյ մայրաքաղաք Հռոմի մէջ կայացած յունահռոմէական ոճի ըմբշամարտի Եւրոպայի առաջնութիւնը Հայաստանը նուաճած է 4 մետալ՝ 2 ոսկէ եւ 2 պրոնզէ: Գէորգ Դարիպեանն ու Արթուր Ալեքսանեանը դարձան Եւրոպայի ախոյեաններ, իսկ Կարէն Ասլանեանն ու Կարապետ Չալեանը նուաճեցին պրոնզէ մետալ:

(Մարզական լուրեր էջ 18)

լով: Ահա թէ ինչո՛ւ Հայաստան կրցած է Ամերիկայի, Ռուսիոյ եւ Եւրոպայի հետ մշակել եւ ունենալ հաւասարակշռուած կապ ու յարա-

բերութիւն՝ անոնց ցոյց տալով օգտակար գործընկեր դառնալու տուեալներ, որպէս մտքի եւ բազուկի տէր երկիր:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Նոր Սերունդի եւ Հ.Մ.Մ.ի Խրախճանքը Սիրահարներու Տօնին Առիթով

Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Հ.Մ.Մ.ի համատեղ կազմակերպութեամբ իւրօրինակ նախաձեռնութիւն մը տեղի ունեցաւ նշելու համար «Սիրահարներու Տօն»ը (Valentine's Day):



Արդարեւ, սիրահարներու տօնին ճիշդօրը՝ Փետրուարի 14ին (որ կը գոգադիպէր նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Տեառնընդառաջի տօնին) Փասատինայի կարօ Սողանալեան անուան վերանորոգուած ու բարեզարդուած սրահը տօնական իւրօրինակ տեսք մը ստացած էր...: Միջոցառումը տօնական էր եւ միջավայրն ալ իտալական...: Իսկապէս ինքնատիպ էր, քանի որ թէ զարդարանքները, թէ որմնանկարները եւ սահիկներով պատերու վրայ ցուցադրուող իտալական պատմական տեսարանները, ներկաները ակամայ կը փոխադրուէին Հռոմ, Ֆլորենս, Նաբոլի կամ Վենետիկ իր կոնտրլներով...:

Այս բոլորին վրայ պէտք է աւելցնել սեղաններու ճաշակաւոր զարդարանքներն ու յատկապէս իտալական խոհանոցի պէսպիսուն աղանդներն էր, իրենց ախորժաբեր տեսքով...:

Ընտրանի հասարակութեան մէջ կը նշմարուէին գոյգ միութիւններու, ինչպէս նաեւ քոյր կազմակերպութեանց անդամներ եւ համակիրներ: Ակներեւ էին օրուան պատշաճ գոյներով ու հոռմէական դափնեպսակներով պնտուած կարգ մը գոյգեր:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Հայ Մարմնամար-

զական Միութեան կողմէ նախաձեռնուած սոյն խրախճանքին բացման խօսքը կատարելով Հ.Մ.Մ.ի ատենապետ Վարդան Գոճապալեան շնորհաւորեց ներկաները եւ իր ջերմ բարեմաղթութիւնները փոխանցեց սիրահարներու տօնին առիթով:

Իտալական հանրածանօթ ժողովրդային երգերու եւ եղանակներու գուարթ միջոցառումները, տեղի ունեցաւ իտալական տարբեր ճաշատեսակներու սպասարկութիւնը, մեծ բաւարարութիւն տալով այդ երկրի իւրաքանչիւր կերակրատեսակներու համակիրներուն:

Գեղարուեստական յայտագիր մըն ալ գործադրուեցաւ: Օրուան պատշաճ գուարթախօսութեանց յատուկ սենարիօ մը պատրաստուած էր կատարողութեամբ Յարութ Տէր Դաւիթեանի եւ Վարդան Գոճապալեանի: Իտալո-հայկական երկխօսութիւնը՝ իր պէսպիսուն երանգներով, խնդուքի երկար պահեր

Շար.ը էջ 19

Դեսպան Բայբուրդեանը Հիւրընկալուեց Արեւմտեան Լոս Անջելեսի Առեւտուրի Պալատի Կողմէ



Փետրուարի 5-ին ՀՀ գլխաւոր հիւպատոս, դեսպան Արմէն Բայբուրդեանը, իբրեւ գլխաւոր բանախօս, մասնակցեց Արեւմտեան Լոս Անջելեսի Առեւտուրի պալատի (West Los Angeles Chamber of Commerce) հերթական միջոցառմանը, որը նուիրուած էր Հայաստան-Լոս Անջելես գործարար շարձումներու թիւններ խորացմանը պալատի ներուժին ի սպաս դնելուն: Դեսպան Բայբուրդեանը ներկայա-

ցրեց Հայաստանում ներդրումներ կատարելու հնարաւորութիւններն ու տնտեսութեան համապատասխան ոլորտները: Նա նաեւ մանրամասն խօսեց Հայաստանի հետ առեւտուրի ծաւալման առաւելութիւնների մասին՝ թուարկելով ապրանքների բազմապիսի տեսակներին: Արմէն Բայբուրդեանը կոչ արեց օգտագործել ղէպի Հայաստան գրօսա-

Շար.ը էջ 19

Հարցազրոյց Սքաթ Շներլլսընի հետ



ԳԵՌՈՂ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Սքաթ Շներլլսըն (Schmerelson) թեկնածու է Լոս Անճելըսի Միացեալ Դպրոցներու Ցանցին (LAUSD) Ուսումնական Խորհուրդի երրորդ ընտրաշրջանին: Ուսումնական Խորհուրդը կը բաղկանայ եօթը ընտրաշրջաններէ, որոնցմէ մեծագոյնն է երրորդ ընտրաշրջանը: Սքաթ Շներլլսըն դիմած է վերընտրութեան եւ ունի երկու մրցակիցներ, Մէրիլըն Քոզինթէք եւ Էլիզապէթ Պէտտըր:

Լոս Անճելըսի Միացեալ Դպրոցներու Ցանցը կը բաղկանայ 1,200 վարժարաններէ, ուր կ'ուսանին մօտաւորապէս 800,000 աշակերտներ եւ կը գործեն 30,000 ուսուցիչներ:

Երրորդ ընտրաշրջանը կ'ընդգրկէ հիւսիսէն Porton Ranch, հարաւէն Reseda, արեւելքէն Woodland Hills, իսկ արեւմուտքէն North Hollywood: Ան կը պարունակէ 110 դպրոցներ, ուր կ'ուսանին մօտաւորապէս 25,000 հայեր:

Հետաքրքրական հարցազրոյց մը տեղի ունեցաւ, որուն ներկայ էր նաեւ Միհրան Գալաճեանը: Ստորեւ՝ կարեւորը հարցերը, որոնք արծարծուեցան:

Հարց - Ինչո՞ւ կ'ուզէք վերընտրուիլ այդ պաշտօնին համար:

Պատ. - Որովհետեւ կ'ուզեմ որ մարդիկ գիտնան թէ ինչո՞ւ հանրային դպրոցները կարեւոր են եւ ես շատ լաւ կը հասկնամ թէ Լոս Անճելըսի Միացեալ վարժարաններու Ցանցը ինչպէ՞ս կը գործէ:

Հարց - Այդ պաշտօնին համար մրցակիցներ ունի՞ք:

Պատ. - Այո, երկու մրցակիցներ: Մէրիլըն Քոզինթէք, որ կրէնտ երկրորդական վարժարանի հաղորդակցութեանց պատասխանատուն է եւ Էլիզապէթ Պէտտըր, որ անցեալ անգամ ալ մրցակիցս էր եւ պարտուեցաւ:

Հարց - Ի՞նչ առաւելութիւն ունիք այդ մրցակիցներէն:

Պատ. 35 տարուան փորձառութիւն ունիմ կրթական մարզին ներս՝ նախ որպէս ուսուցիչ, խորհրդատու, ապա օգնական տնօրէն եւ վերջապէս տնօրէն:

Հարց - Երբեւի՞տ կ'այցելէ՞ք ձեր շրջանի վարժարանները:

Պատ. - Այո, ամէն օր եւ մարդիկ կը զարմանան որ իրենցով հետաքրքրուած եմ: Ես նոյնիսկ այցելեցի շրջանիս ոչ հանրային վարժարանները:

Հարց - Օրինակ մը կրնա՞ք տալ այդ այցելութեանց վայրին եւ նպա-

տակին մասին:

Պատ. Սիրով, այցելեցի Մանուկեան-Տէմիրճեան եւ Ֆերահեան վարժարանները, երբ գիշերով խափանարար մարդիկ թրջական դրօշակը պարզած էին անոնց պատերուն վրայ: Այցելութեանս նպատակը նեցուկ կանգնել էր եւ օգնութեան հրաւիրել մեր վարժարաններու ցանցին ոստիկանները: Հոն էր նաեւ նահանգային ներկայացուցիչ Էտրին Նազարեանը:

Հարց - Ինչպէ՞ս կ'ուզէք օգտակար հանդիսանալ աշակերտներուն:

Պատ. - Ես կ'ուզեմ իրենց մտքերուն մէջ դրօշմել մշակութային գիտակցութիւնը (cultural awareness): Ես ջատագովն եմ ցեղային ուսումնասիրութեանց (ethnic studies), այսինքն ջանք պիտի տանիմ որ իւրաքանչիւր աշակերտի պատկանած մշակույթն ու քաղաքակրթութիւնը ձանձուցի եւ յարգուի բոլորին կողմէ:

Հարց - Իսկ հայ աշակերտներուն համար ի մասնաւորի, ի՞նչ աշխատանք կը տանիք:

Պատ. Կ'ուզեմ որ Հայկական Յեղասպանութիւնը՝ Ռուստայի, Քամպուտիայի եւ այլ երկիրերու մարդկային վայրագութեանց կողքին, դասաւանդութեան նիւթ դառնայ, գիրքերու մէջ: Առաւել, կ'աշխատիմ որ մեր դպրոցներու ցանցը որոշում առնէ յարգելու հայ աշակերտները՝ ամէն տարուան Ապրիլ 24-ին:

Հարց - Ձեր դպրոցներուն մէջ հայ եւ օտար աշակերտներուն միջեւ՝ որեւէ դժուարութիւններ կա՞ն:

Պատ. Այս հարցին կ'սպասէի: Դժբախտաբար այո: Կրէնթ երկրորդական վարժարանի հայ եւ մեքսիքացի աշակերտները ամէն Ապրիլ 24-ին եւ Մայիս 5-ին, կռիւի կը բռնուին: Այս հարցը բարուք լուծելու համար, Հայաստանի Հանրապետութեան եւ Մեքսիքոյի Լոս Անճելըսի հիւպատոսները դպրոց եկան եւ շատ չաջող երկխօսութիւն մը տեղի ունեցաւ: Յուսանք որ այդ կռիւները այսպէսով վերջ կը գտնեն:

Հարց - Վերջին ըսելիք մը ունի՞ք մեր ժողովուրդին:

Պատ. - Այո, կ'ուզեմ իմ հաւատամք բաժնել իրենց հետ: Ես կը խորհիմ որ բոլոր աշակերտները համահաւասար են եւ անոնց ծնողները բոլորն ալ կը կամենան լաւագոյն ուսումը տալ, իրենց զաւակներուն:

Շնորհակալութիւն ձեր կարեւոր եւ օգտաշատ ներդրումին համար եւ յաջողութիւն ձեր ընտրապայքարին մէջ:

Pashinyan and Aliyev Debate in Munich: “Nagorno Karabakh Has Never Been Part of Independent Azerbaijan”

MUNICH — Armenian Prime Minister Nikol Pashinyan once again reaffirmed that Nagorno Karabakh has never been a part of independent state of Azerbaijan.

Participating at a panel discussion on the Nagorno Karabakh conflict together with Azerbaijani President Ilham Aliyev on the sidelines of the Munich Security Conference, the Armenian PM said he sees a necessity for new ideas for the negotiations of resolving the conflict.

“Nagorno-Karabakh is part of Azerbaijan, this is the historical truth and ... the territorial integrity is recognized by the whole world, and Nagorno-Karabakh is an integrated part of our country,” Aliyev said.

“Over the past 25 years, 30 years, we are repeating every time the same thing,” responded Pashinyan. “And I’m afraid that the international community is tired of hearing the same thing, and I think we need to bring some new ideas. And when I became Prime Minister of Armenia through the peaceful, Velvet, democratic Revolution, I understood that it isn’t possible to solve this conflict with one or two steps”

Ան հարկադրուած կ'ըլլայ ճամբան փոխել եւ երեք ժամ քալելէ ետք կ'ապաստանի հսկայ ժայռերու կողքին, ուր կը հանգչի ապահով զգալով ինքզինքը: Չեթէները ի գուր գինք կը փնտուէին իրարու ձայն տալով, սակայն ձեռնուռակ կը վերադառնան իրենց որջերը: Մութը կոխելէ ետք ան կ'երթայ գիշերել տաճկաց գերեզմանատունը, քանի որ թուրքեր չափազանց շատ կը վախնային գերեզմանատուներէն, հետեւաբար հայ մարտիկներուն համար գերեզմանատունը ամենաապահով վայրն էր թշնամի թուրքերէն իրենք գիրենք պաշտպանելու համար:

Գերեզմանատան մէջ քանի մը ժամ քնանալէ ետք, կրկին ճամբայ կ'իջնայ իր մարտնչող հայրենիքը՝ Հաճնը հասնելու մեծ բաղձանքով: Կը հասնի Աղղալ Ուշաղի գիւղը եւ կը սպասէ որ բնակչութիւնը տուն մտնէ ու փողոցները ամայանան: Լուրթեան մատնուած գիւղին մէջէն քալած պահու յանկարծ կը լսէ շուներու հաջողք, որ կը կասեցնէ գինք ու կարճ դադարէ մը ետք կրկին կը շարունակէ իր ճամբան: Այս գիւղը որպէս անցք օգտագործելը շատ վտանգաւոր էր, սակայն ուրիշ ելք չունէր ու այդ վտանգը ակնի կը զօտեպնդէր գինք՝ հայրենիք հասնելու իր երազի իրակա-

նացման ճամբուն վրայ: Մինչ այդ իր դիմաց կ'ելլէ հովիւներով եւ շուներով պաշտպանուած այծերու երամակ մը, ուստի կը հարկադրուի ճամբան փոխել ու քալել դէպի ամարանոցները: Ջորերու մէջէն հոսող առուակներու ափին նստած կը հանգստանայ ու ապա կը շարունակէ քալել անվստ դէպի հայրենիք, դէպի ծննդավայր Հաճնը:

Մինչեւ առաւօտ շատ երկար ճամբայ կտրած ըլլալով կը հասնի նոր լեռներու ստորոտը, ուր հովիւի մը տունը կ'երեւէր եւ ուրիշ այծերն ու ուլերը արօտավայր կը դիմէին: Կրկին շան հաջողներ կը լսէ, որոնք գինք կը վախցնեն: Ստիպուած ճամբան կը հարկադրուի փոխել ու այս անգամ մեծ դժուարութեամբ բարձր լեռ մը կը սկսի մագլցիլ: Կ'արժէր իր կեանքի ապահովութիւնը ձեռք ձգելու համար այդ դժուարութիւնը եւս յաղթահարել, իր կեանքը պէտք էր հայրենիքին համար, ան ամէն ինչ պիտի ընէր ողջ առողջ Հաճնը հասնելու համար: Լեռան վրայ ընկողմանած կրակ կը վառէ, կը տաքնայ ու կը կազդուրուի: Հակառակ ցերեկը քնանալու եւ գիշերը քալելու իր ծրագրին, կ'որոշէ ցերեկով իջնել վար ու լեռնային անտառներու ամայութենէն օգտուելով քալել ցերեկով, որ խիստ վտանգաւոր էր: Յանկարծ կը տեսնէ մէկը, որ դէպի իրեն կը մօտենայ ու շուտով կանգ կ'առնէ ծառի մը ետին ու հոնկէ ալ դէպի լեռան գագաթը կը մագլցիլ: Քիչ մը հանգչելէ ետք լեռնէ լեռ մագլցելով Ետրպասանի լեռը կը հասնի, ուրիշ մշուշի մէջ կը տեսնէր Հաճնոյ լեռները:

Կը յուզուի ու կ'արտասուէ, մտաբերելով իր եղբայրներուն անօգնական եւ գուցէ սովահար վիճակը, անհաւասար կուռի մէջ յուսալքուած ու յոռետես: Իր գտնուած վայրը վտանգաւոր էր քանի որ թուրքեր ամառնային իրենց արձակուրդը կ'անցնէին այստեղ՝ Կիտնէճէն կոչուած ամառանոցին մէջ: Գիշերով հարկաւոր էր այս տեղերէն անցնիլ, շարունակելով ճամբան մինչեւ կապուտ ջուր (Կէօքսու) կոչուած գետը, որ Հաճնէն միայն չորս ժամ հեռու էր: Գետի եզերքի բարձունքներուն վրայ վայրի կենդանիներ կային եւ վտանգաւոր էր այդտեղ կեցուլթիւնը: Մարդաբնակ չըլլալուն կը համարձակի լեռնած տուններէն մէկուն մէջ կրակ վառել ու տաքնալ մինչեւ առաւօտ: Հոնկէ կ'իջնէ ու վայրի կենդանիներու սարսափազուրկ որջերուն մօտէն անցնելով, մէկուկէս ժամէն կը հասնի Կապուտ ջուրի եզերքը: Հայրենիքի անսասման սէրը ուժ կու տար ու քաջութիւն, շարունակելու իր խիստ վտանգաւոր ճանապարհորդութիւնը:

Այժմ միակ խնդիրը որ կար կապուտ գետին անցնիլն էր: Ան նախատեսած էր այս դժուարութիւնը եւ իր հետ բերած էր պարան մը եւ երկու երկարավիզ վարտիկներ: Վարտիկները թրջելով, ոտքերը կապելով կ'ուռեցնէ եւ վրան տարածուելով ծփալ կը սկսի առանց ընկղմելու վտանգին: Իսկ ռազմամթերքը ու ուստեղէնը կը տեղաւորէ իր շինած փայտէ մակոյկին վրայ: Պարանի մէկ ծայրը մէջքին եւ միւս ծայրը մակոյ-

Հաճնոյ Հերոսամարտը - 100-Ամեակ Որպէսզի Սերունդները Զմոռնան Հերոս Ասատուր Սաչեանը

կին կապելով զետին վրայ կը ձգէ ինքզինքը եւ լողալով ապահով կ'անցնի միւս ափը: Արդէն հասած էր եզերքը, ուր չինարի ծառերը իրենց ճիւղերը տարածած էին ջուրին մէջ եւ անոնցմէ մէկուն կառչելով դուրս կու գայ ջուրէն: Ձէնքը կը պատրաստէ, հագուստները կը հագուի, պաշարը կարգի կը դնէ: Թաց հագուստներով քալելը դժուար էր, ուստի տեղ մը կը նստի ու կը չորցնէ զանոնք: Գիշերով կը հասնի Աթման, ուր հեռադիտակէն կ'երեւային հովիւներ եւ շուներ, որոնց վախէն կը սպասէ մինչեւ անոնց անհետանալը: Քանի մը ժամ քալելէ ետք կը հասնի Աթմախի ահլը, որ Հաճնոյ հողագործներու հացահատիկի ցանքին վայրն էր: Հոնկէ կ'անցնի Ուձիպէք ըսուած տեղը: Յոգնած էր եւ սպառած ու ուտուածները կը ցաւէին: Հեռադիտակէն ամալուսթիւնն շմարելով կրակ կը վառէ, կը տաքնայ եւ հագուստները կը չորցնէ:

Առաւօտուն կը դիտէ Հաճնոյ լեռները ու կը նշմարէ Հաճնոյ համայնապատկերին միայն մէկ մասը: Հեռուն խրամներ կ'երեւին քարով եւ ծառերու ճիւղերով ծածկուած, ոչ ոք կ'երեւէր խրամներուն մէջ: Հաճնոյ սահմանին կանգնած պէտք էր դիրքորոշուիլ թէ ինչպէս կարելի էր Հաճըն մտնել: Ան եկած էր տեսնելու իր հայրենակիցները, խօսելու անոնց հետ ու վերադառնալու Սիս, Հաճնոյ լուրերը տանելով իր հետ: Ան խօսք տուած էր ու պիտի յարգէր իր խոստումը: Ողջ առողջ մինչեւ Հաճնոյ սահմանները հասնելէ ետք պէտք էր մուտք գործէր Հաճըն, նոյնիսկ եթէ այդ արժէքը իր կենսաբան: Այս վճռականութեամբ ան կ'որոշէր իր բռնելիք ճամբան: Ճիշդ պիտի ըլլար զօրանոցի մէջտեղին գիշերով անցնիլ եւ Ս. Թորոս եկեղեցուց պարտէզներուն մէջէն սողակիլ Հաճըն: Մեծ գոռուկութեամբ կը յառաջանայ քայլ առ քայլ եւ միեւնոյն ատեն գետինն սողալով կը հասնի թրքական զօրանոցին վերին մասը: Անշուք սպրդելով զօրանոցի ետեւի մասէն, կամաց կամաց կրկին սողալով կը հասնի Թուրսարգիսեաններու գերեզմանատունը: Վտանգը շարունակուած էր, կը լսէր թուրքերու եւ հաճընցիներու խօսակցութիւնները, որոնք շատ մօտ դիրքերու վրայ էին: Թուրքերու դիրքերը ետին ձգած ըլլալով ալ վախ չկար անոնցմէ, սակայն եթէ զգոյշ չըլլար հայու գնդակի գոհ կրնար դառնալ: Հաճընցիք զինք թուրք լրտես կարծելով կրնային կրակել իր վրայ: Ս. Թորոս եկեղեցուց դիմացը պատնէշի մը ետին պահուումը կէս գիշերին կը պոռայ թէ ինք Ասատուր Սաչեանն է, Սիսէն սուրհանդակ եկած է: Անոնք չեն հաւատար եւ զինք թուրք կարծելով կը սկսին կրակել եւ այդ գիւնարձակումը մօտ 1 ժամ կը տեւէ: Ասատուր իր ամբողջ ուժով կը պոռայ որ չկրակեն ու յանկարծ իր հորեղբորդին Նազարէթ Սաչեանը կը ճանչնայ իր ձայնը եւ իր գիւնարգիներուն կը պատուիրէ չկրակել: Մեծ յուզումի եւ ուրախութեան բացառանգութիւններով անոնք կը գիւրկընդխառնուին եւ կ'արտայայտեն իրենց զարմանքը, թէ ինչպէս ան կը ցոյց տայ հասնել Հաճըն, երբ բոլոր ճամբաները փակ էին իր առջեւ: Այս ինչ հրաշք էր, որ Ասատուրը հասցուցած էր

Հաճըն:

Ձինեալ հաճընցիները Ասատուրը անմիջապէս հրամանատար ձէպէճիի քով կը տանին, որ ճակատը համբուրելով կ'ըսէ «դուն հերոս ես»: Սիսէն Չանկալեանի եւ Թուրսարգիսեանի կողմէ կաթով գրուած նամակները ան կը յանձնէ ձէպէճիին, որոնք կրակին ցոյց տրուելով կը կարդացուէին: Այդ նամակներու բովանդակութիւնը կը պարզէր ֆրանսական կառավարութեան դիրքը Հաճնոյ հանդէպ, որ խիստ յուսահատական էր: Հրամանատարը Ասատուրէն քաղելով բոլոր տեղեկութիւնները՝ կը թելադրէր, որ ան Սիս վերադառնար եւ Հաճնոյ յուսահատական գոյամարտին թարգմանը ըլլար թէ՛ հայոց եւ թէ՛ ֆրանսացիներու մօտ: Ան տեսակցութիւններ կ'ունենայ նաեւ Գայմագամ Չալեանի եւ Հաճնոյ մեծամեծներուն հետ, որոնք Հաճնոյ պաշարման բոլոր մանրամասնութիւնները կը փոխանցեն իրեն որպէսզի ինք ալ, իր կարգին, տեղեկացնէ այդ բոլորը՝ Սիսի հայ եւ օտար քաղաքական եւ ռազմական ղեկավարութեան: ձէպէճիի հետ վերջին տեսակցութիւնը տեղի կ'ունենայ Հաճնոյ աղաներու ներկայութեան կը յայտարարէ «ես շատ կոխներու մասնակցեցայ կովկասեան եւ այլ ճակատներու վրայ եւ ստացայ պատուոյ նշան Ջօր. Անդրանիկէն: Տասնեակ տարիներու մէջ չտեսայ սուրհանդակ մը այնքան «հերոս», որքան տեսայ երեք օրեր առաջ Ասատուր Սաչեանը: Եթէ Տէրը կամենայ եւ մեր գէնքերը յաղթական ըլլան եւ մենք ազատուելու բարտը ունենանք, իմ ունեցած բոլոր նշաններս պիտի նուիրեմ մեր «հերոս Ասատուրին»: ձէպէճիին Գոմիսէր Յաբէթ Ահարոնեանին կը թելադրէ Ասատուրի ճամբորդութեան հետ կապուած անհրաժեշտ բոլոր ռազմական եւ այլ սարքերը, հանդերձանքն ու ուտեստեղէնը պատրաստել ու զայն ճամբու դնել գիւնարներու խումբով մը: Կէս գիշերին անոնք կ'ընկերակցին Ասատուրին՝ Հաճընէն դուրս որոշ հեռաւորութեան մը վրայ եւ հրաժեշտ կ'առնեն իրարմէ ծանր հոգեվիճակով: Այս առաքելութիւնը եւս Ասատուր յանձն կ'առնէ հայրենիքի փրկութեան սուրբ նպատակին համար: Ան բարոյական պարտաւորութեան տակ կը զգար ինքզինքը վերադառնալու Սիս եւ պատմելու ազգակիցներուն՝ հաճընցիներու օրհասական կեանքին մասին: Արդեօք իր տեսածներէն ո՞ր մէկը պիտի պատմէր ծերունիներու թախանձանքը, կորիճներու պատգամները, մայրերու, կոյս քոյրերու, եղբայրներու աղաչանքը, Հաճնոյ անհեռանկար ապագան:

Հաճընէն Սիս վերադարձը միայն 3 օր կը տեւէ ու արդէն մերձակայ յայտնիներու մէջէն գաղտնաբար յառաջանալով կը մօտենայ հայկական դիրքերուն ու ձայն կու տայ «ես Ասատուր Սաչեանն եմ, Հաճընէն կու գամ»: Ձայնը չճանչնալով եւ թշնամի կարծելով աւելի ուժգին կը սկսին կրակել: Սակայն, շատ չանցած, կ'անդրադառնան որ եկողը իրենց հայրենակիցն է, շուտով կ'առաջնորդեն զինք Սամուէլ Չառուշի դիրքին, որմէ ետք ան կը դիմաւորուի հաճընցի հրամանատար Պօղոս Թուրսարգիսեանի կողմէ:

Անոնք կարօտով կ'ողջագուրուին, սակայն երբ Թուրսարգիսեան կ'իմանայ Հաճնոյ անյոյս վիճակին մասին, ան դառնօրէն կ'արտասուէ: Շուտով տեսակցութիւններ կը կազմակերպուին որպէսզի Ասատուրը հանդիպի Ազգ. Միութեան ատենապետ Միսաք Ազիբեանին, ֆրանսացի նահանգապետ Պ. Թայարտային, որուն կը յանձնէ Գայմագամ կարապետ Չալեանի նամակը: Թայարտա կը գնահատէ Ասատուրը իր քաջագործութեան համար, սակայն կը յայտնէ որ Ատանայէն նամակ ստացած է Սիսէն նահանջելու հրահանգով:

Թուրսարգիսեան կը խնդրէ արտօնել իրեն հայ կամաւորներով եւ իր ունեցած ռազմամթերքով Հաճըն մեկնել օգնութիւն հասցնելու համար: Թայարտան կտրուկ կը մերժէ խնդրանքը՝ յուսալքութեան մատնելով իր շուրջը գտնուող հայ ռազմական եւ քաղաքական այրերը: Շուտով կ'իրականացուի Սիսը պարսկու ֆրանսական ծրագրերը, նոր բռնագաղթ մը պարտադրելով հայութեան: Սիսի բնակչութիւնը դէպի Ատանա, Տարսոն եւ Մերսին կ'ուղղուի ամենադժուար պայմաններու մէջ: Մինչ այդ, Ասատուր կը շարունակէր իր առաքելութիւնը Հաճնոյ օգնութիւն հասցնելու կազմակերպչական աշխատանքներուն: Սիսի կամաւորական գունդի պետ Չանկալեան զինք զրկած էր Ատանա՝ ազգային ղեկավար Միհրան Տամատեանին մօտ, յանձնելու Հաճընէն բերած իր նամակները եւ տալով լրացուցիչ տեղեկութիւններ Հաճնոյ մահացած վիճակին մասին: Տամատեան կը քաջալերէ Հաճնոյ փրկութեան գործը կազմակերպելու տեսլականը: Հետզհետէ կը կազմուի կամաւորներու բանակը, կը գոյնայ անհրաժեշտ գումարը եւ ի մի կը հաւաքուի պատկառելի ռազմամթերք: Ատանայի Աբգարեան վարժարանի սրահին մէջ կը համախմբուին հաճընցիներ, ուր Ասատուր կը զեկուցէ Հաճնոյ ներկայի գոյավիճակին մասին տալով իր ականատեսի վկայութիւնները, կը գոտեպնդէ Հաճնոյ օգնութեան փութալու անյետաձգելի գործը, եւ մօտ 500-ի հասնող հաճընցիներու կամաւորական բանակը անդամագրելու ծրագրերը: Կամաւորական գունդերու համար հրամանատար կ'առաջարկուի Զօրավար Անդրանիկի բանակէն Սարգիս Արմաղանեանը, որուն հանդէպ բոլորն ալ ունէին խոր հաւատք եւ վստահութիւն: Արմաղանեան կը մերժէ ընդունիլ նման առաջարկ, հիմնուած նախկին փորձառութեանց հիման վրայ, որոնք չէին յուսադրեր զինք նուիրուելու:

նման պատասխանատուութեան մը: Սակայն Միհրան Տամատեան կը յաջողի համոզել զինք ընդունելու այս ազգանուէր առաքելութիւնը: Անմիջապէս ան կը լծուի գործի եւ կը մեկնի Ազգարճա, ուր համախմբուած էին հաճընցի կամաւորները: Կը սկսի կազմակերպել բանակի ստորաբաժանումները, հետագայի խումբը, յառաջապահը, յետապահը, հեծելազորքը, սուրհանդակները, կարմիր խաչը եւ այլն: Երբ Արմաղանեան կը յաջողի կազմակերպել նման հզօր բանակ, կը դիմէ Տամատեանին, որ Հաճնոյ փրկութեան նուիրուած իր ռազմական գործողութիւններուն համար անկախ ռազմավարութիւն վարելու պաշտօնական հրամանագիր ապահովէ ֆրանսական իշխանութիւններէն: Հարկաւոր էր հազարաւորներու փրկութեան համար իր ստանձնած պատասխանատուութիւնը իր լրումին հասցնել առանց խափանարար, արտաքին միջերժեռ տալ պաշտօնական որեւէ արտօնութիւն եւ Արմաղանեան կը հարկադրուի հրաժարիլ իր հրամանատարի պաշտօնէն: Ձինք փոխարինող հրամանատարները, չունենալով իր կարողութիւնն ու հմայքը, պատճառ կ'ըլլան բանակի նօսարացումին եւ ի վերջոյ կազմալուծման: Կը ձախողին Հաճըն օգնութիւն ղրկելու բոլոր կարելիութիւնները: Ֆրանսական թրքամէտ քաղաքականութիւնը զօրավիզ հանդիսացած էր թրքական ուժերու կատաղի յարձակումներուն, ճգմելու համար հայկական ըմբոստութեան երեւոյթները Կիլիկիոյ տարբեր շրջաններուն մէջ: Թէեւ անոնց թիրախը գլխաւորաբար Հաճընն էր, որուն խիզախ մարտիկները կը դիմադրէին հերոսական ինքնապաշտպանութեամբ, առանց արտաքին որեւէ օգնութեան: Պաշարուած Հաճըն 9 ամիս դիմադրելէ ետք, 15 Հոկտեմբեր 1920-ին կը նահատակուէր 6000 հաշուող իր բնակչութեամբ: Հերոս Ասատուր Սաչեանի կեանքը մինչեւ իր խոր ծերութիւնը յատկանշուեցաւ անսփոփելի վիշտով մը իր նահատակ հաճընցի հայրենակիցներու յիշատակին, որ միայն իր հոգեւոյն մէջ մինչեւ իր մահը: Չարմանալի գուգադիպութեամբ մը, ան մահացաւ 15 Հոկտեմբեր 1968-ին, Հաճնոյ հերոսամարտի ոգեկոչման օրը: Օրուան եկեղեցական եւ ազգային իշխանութիւններու որոշումով, ան արժանացաւ ազգային թաղման արարողութեան որպէս հայ ժողովուրդի հերոս գաւակը:

Հանգիստ իր եւ իր հերոսական ժողովուրդի աճիւններուն:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵԶԱՐԴՈՒԱԾ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ՎԱՍԱՐ)

ԱՄԸՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

Փոթորկալի Կեանքի Սը Եղերական Աւարտը (Արփիար Արփիարեանի Նահատակութեան Առիթով)

Իր հայրենասիրութիւնը հայրենամոլութիւն էր գրեթէ:
Վահան Թէքեան

ԱԽԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

12 փետրուար 1908, ճիշդ այսօրուան պէս՝ Չորեքշաբթի: Գահաձիւղի մէջ պատահած սպանութիւն մը պիտի ցնցէր հայ կեանքը: Եղբայրասպան գնդակներու զոհ կ'երթար ինքնատիպ անձնաւորութիւն մը, որուն վիճակուած էր փոթորկալի կեանք մը՝ նոյնքան փոթորկալացի եղբորական վախճանով մը: Նահատակ էր 56-ամեայ Արփիար Արփիարեան՝ գրչաւորներով՝ Հրազդան, Հայկակ, Սկեպտիկ, Հրպետ եւ այլն:

Իր ժամանակաշրջանին ցայտուն դէմքերէն եղաւ ան եւ իր եռեւեփուն կեանքով ու իւրաքանչեւ կենցաղով զրաւեց հետաքրքրութիւնը շատերու: Նոյնքան յետ նահատակութեան իր շուրջ հոսեցուց անսպառ մելան վէճերու, վերլուծականներու, համակրական եւ հակակրական յղուածներու, նոյնիսակ՝ մենագրութիւններու: Իր շիրիմը Գահաձիւղի Մար Մինա գերեզմանատան մէջ եղաւ ուխտատեղի գրական գործիչներու եւ ունեցաւ կայուն պատուանդան հայ հրապարակագրութեան պատմութեան մէջ՝ որպէս ջղուտ գրիչ, հայ գրականութեան մէջ՝ ուսուցիչ իրապաշտ գրական ուղղութեան եւ իր ժամանակակիցներու յիշողութեան մէջ՝ որպէս գեղուն ու եռուն հայրենասէր գործիչ:

Գահաձիւղի մէջ պատահած եպեղեղի ոճիրը երրորդն էր իր դէմ կատարուած մահափորձերուն: Առաջինը՝ 25 Դեկտեմբեր 1895, Պոլիս, Երկրորդը՝ 22 փետրուար 1903, Վենետիկ, եւ եթէ նախկիններէն կրցաւ Նախախնամութեան բարերար միջամտութեամբ փրկուիլ, ապա վերջինը զինք տապալեց դիտապատ: Իր նահատակութեան տարեկիցին, գրող Երուխան (Երուանդ Սրմաքէշխանյան) կը գրէր. «Անցեալ տարի Ափրիկէի հողին վրայ մարդ մը ինկաւ, ազգով հայ, սրտով հայ, մտքով հայ, գրչով հայ: Ասիկա այն տեսակ մարդերէն էր որոնք հազուադէպ կերպով կ'իյնան ազգերու արգանդէն, մանաւանդ մեր ազգին ոչ այնքան բեղմնաւոր արգանդէն»:

Բազմաթիւ ոլորտներու մէջ ներգրաւուեցաւ ան՝ միշտ յարուսուն նկարագիրով եւ ճակատային գիծի վրայ գտնուեցաւ՝ միշտ անվեհեր խիզախութեամբ: Կարծէք կը սիրէր յայտնուիլ փոթորիկներու կիզակէտին՝ ըսելու իր խօսքը, գրելու իր տեսակէտը, խարազանելով՝ անխնայօրէն եւ մարտնչելով՝ անեբերօրէն:

Ահա մի քանի ընդգծելի կէտեր իր կենսագրութեան մասին: Նկատի առնելով հայ ժողովուրդի երկու հիմնական հատուածներուն (արեւմտահայ եւ արեւելահայ) գործակցութեան հրամայականը եւ անոնց մտաւորականութեան մերձեցման անհրաժեշտութիւնը, սերտ կապեր ստեղծեց թիֆլիս հրատարակչուոյ «Մշակ» թերթի խմբագիրներուն հետ, աշխատակցելով այդ տարածուն թերթին՝ գործնական քայլ մը առած եղաւ այդ ուղղութեամբ: Իր գրիչով ջատագովեց ամէն բնոյթի թիւրիմացութեան վերացումը: Ինչքան հեռատես նախաձեռնութիւն մըն էր այս, որուն շուրջ առ այսօր կը խօսուի, կը լսուի առաջարկ

ներ վերամբարձ, սակայն՝ երեւոյթը տակաւին կը մնայ որպէս խոցելի կէտ: Արփիարեանի ուղին այժմէական չէ՞ ցայսօր:

Երբ հայ յառաջող մտաւորականութիւնը կեղծոնացած էր Պոլիս, կրթական-լուսաւորչական շարժում մը սկսաւ Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ մէջ դպրոցներ եւ կրթօճախներ բանալու ուղղութեամբ: Առանց գաւառի հայութեան մտաւոր գարթօքին, թերի պիտի մնար հայոց ինքնութեան պահպանումը: Ընդարձակ կրթական ցանց մը գոյացաւ Օսմանեան կայսրութեան տարբեր վայրերը ընդգրկող: Նորաբաց վարժարաններն ու հոն դրկուած դասագիրքերը նորարար փոփոխեցին անոնց սեռի տակնը: Այդ շարժման առաջատար դէմքերէն էր Արփիարեան:

Ան եղաւ ազգային ազատագրական պայքարին հաւատարմորէն եւ գրականութիւնը դարձուց ազգու գէնք զինեալ պայքարի գաղափարախօսութեան արմատաւորման համար: Բոլոր ժամանակներու համար ընթացող դասական դարձած «Կարմիր ժամուց»-ին պատգամը յստակ էր. «Իւրաքանչիւր հայ պարտի մասնակցել հայ մարտիկը զինելու գործին: Կոչը ուղղուած էր յատկապէս հարուստ ու պահպանողական խաւին, որոնք հեռու կը մնային հայոց մարտական խմորումներէն: Տարիներ ետք՝ Հայաստանի մէջ որդեգրուած «ազգ-բանակ» թեզին առաջին սաղմն էր այս՝ հեռատեսօրէն անոր կողմէ ընդգծուած:

Չեղաւ ինքնամոլութիւնը՝ ինքն իրեն համար: Այլեւ՝ շուրջը համախմբելով խոստովանալից եւ երիտասարդ ուժեր, ստեղծեց գրական հոսանք մը՝ իրապաշտութեամբ շեշտուած, կեանքին մօտ եւ յանուն ժողովուրդին: Այդ առումով իր խմբագրած թերթերուն մէջ թրծուեցան արեւմտահայ բազմաթիւ գրագէտներ՝ Լեւոն Բաշալեանէն Տ. Կամսարական, Երուխան, Ե. Օտեան, Մելքոն Կիւրճեան (Հրանդ) ու Գ. Զօհրապ: Թէեւ այդ սերունդէն տարիքով քիչ մը երէց էր, բայց զինք կը կոչէին «հայրիկ», այս սինքն՝ գրական ուղղութիւն տուող առաջնորդ: Եւ իր մշակած գրականութեամբ առաւել յղկեց եւ հարստացուց արեւմտահայ գրական աշխարհաբարը, ճոխացուց լեզուն, վառապաշարը եւ լեզուամտածողութիւնը:

Սակայն, անոր հիմնական յատկանիշը կը սեպուի հրապարակագրութիւնը: Մամուլի մարդ էր հայ հրապարակագրութեան այս սկզբնադէպը, որ նոր ոճ եւ ուղի հարթեց մամուլի պատմութեան մէջ: Նոր որակի բարձրացուց եւ գրականացուց մամուլը՝ գայն դուրս բերելով կաղապարելի ըմբռնումներէ: Արուեստի վերածեց նախապէս սովորական յղուած եւ թղթակցութիւն նկատուած գրութիւնները: Խմբագրեց «Մասիս», «Արեւելք», «Հայրենիք», «Մարտ», «Նոր Կեանք», «Շիրակ», «Լուսաբեր» թերթերը, ունեցաւ քրոնիկներու սիւնակ մը՝ իր խաչը ու արի գրիչով, անվախ քննադատութիւններով: Իր անուան շնորհիւ իր խմբագրած թերթերը աւելի կը դառնային

ժողովրդական եւ փնտրուած: Դասական տիպի խմբագիր չէր, այլեւ՝ նորարար, երբեմն աղմուկն ու վիճաբանութիւնները սիրող: Համոզուած էր որ գրիչը գէնքի տեսակ մըն է, եւ յաճախ աւելի նպատակասլաց:

Կենցաղային առումով խիստ ժուժկալ կեանք մը ապրեցաւ ան: Երբեմն չորաբեկի կարօտ եւ արտաքին տեսքով անկուտի թշուառականի նմանող: «Տէրվիշ» կը կոչէին տեւաբար վարատական ապրած այս մտաւորական հայը, որ ամէնուրեք իր ինքնատիպ նկարագրիցն եւ սկզբունքներէն չզիջելու համար՝ կը գերադասէր համեստ կեանքն ու գրկեալ աւօրեան:

Նուազ փոթորկալի չեղաւ անոր ազգային-կուսակցական կեանքը: Հրապարակուած Հնչակեան կուսակցութեան վաստակած հմայքով՝ անդամագրուեցաւ անոր, հասաւ դեկաւար դիրքերու, եղաւ առաջնորդներէն անոր: Ապա, տարակարծութիւններէ ետք՝ արտաքուստեցաւ եւ եղաւ վերակազմեալ Հնչակեաններու կարկառուն ղեկավարներէն: Հոն եւս տարակարծութիւններ եւ պառակտում: Վերակազմեալ թեւին վատահամար դեկաւարներէն Վահէ Արզուեանի հետ լարուածութիւնը հասաւ ատելութեան եւ որ եղաւ վճարող իր ճակատագիրին համար: Դժգոհ եւ խրտչած ներկուսակցական կուսներէ թէեւ հեռացաւ անոնցմէ, սակայն շարունակեց հրապարակագրելու կազ ու կուսներէ: Չհանդուրժեց դրամի եւ նենգութեան ճամով տիրողներու տիրացած ճղճիմութիւններ՝ փաշա, ամիրա, երեսփոխան, պէյ, աղա եւ այլն: Կատաղի ճակատ մըն ալ այս խաւին դէմ է միշտ ու միշտ կրակոտ ոճով եւ գգետնող քննադատութիւններով: Ինչո՞ւ: Որովհետեւ կառուցի մարդ չէր ան: Իր ուրոյն ճանապարհէն գայթող ճկուն մարդը կամ քիչքի մասնագէտը չեղաւ նա: Իր սեփական արահետէն չխոտորողն էր՝ ինչ ալ ըլլային պարագաներն ու վտանգները:

Եւ կեանքով վճարեց զինք իր անսասնաբար ուղիին: Քիչ մը չոր ու կարծր խառնուածքին: Մրրիկներէ հաճոյացող վարքագիծին: Ահա այսպէս կը գրէ իր մտերիմներէն՝ եգիպտացի, իրաւաբան ու գրող Վահան Մալեքեան. «յագուրդ տալով իր անդիմադրելի կոչումին եւ ձգտումներուն, ուխտեալ դիմակագրեծողի մը բուն հաւատարմութիւն ու կիրքով շատ մը խնդիրներ յուզեց, կամ եւս փոթորիկներ յարուց, թաքուն ճշմարտութիւններ հրատարակելով ու դաժան իրողութիւններ երեւան հանելով, այն-




պէս որ, թէեւ իր գաղափարակիցներուն շրջանակը օրէ օր լայնացաւ եւ արտասահմանի մէջ ողջամիտ հայութիւնը իրմով գարթում ունեցաւ, սակայն իր երէկի ընկերները, որոնցմէ գգուանքով հեռացած էր, հին ոխերով ուռեցուորած, վրէժխնդրութեան ամենէն արմատական միջոցը նկատեցին, չկրնալով գաղափար սպաննել, սպաննել մարդը»:

Հոս, թիւրիմացութիւն (կամ՝ չարախոհութիւն) մը ընդհանրացած է դժախտաար եւ կը կրկնուի յաճախ, ըստ որուն, Արփիարեանը սպանուեցաւ սոցիալ դեմոկրատ հնչակեաններու կողմէ: Եւ այս յերիւրանքին հեղինակներէն է նաեւ Միմոն Վրացեան, որուն օրին ըմբերանիչ պատասխան տուած է Վահան Թէքեան «Արեւ» օրաթերթին մէջ, 1931 Նոյեմբերի թիւերուն: Հոն ան կը գրէ. «Ամէն մարդ գիտէ՞ թէ «հին» հնչակեանները մաս չունին Արփիարի սպանութեան մէջ, ինչպէս գիտէ նաեւ՝ թէ Արփիարը վեց տարի է վեր հեռացած էր կուսակցական կեանքէ, երբ սպանուեցաւ իր հրապարակագիրը, իբր «Լուսաբեր» մէջ մղած հրապարակագրական պայքարին համար, վերակազմեալ-հնչակեանի մը կողմէ»:

Որպէս եզրակացութիւն՝ ահա սեղմ ու դիպուկ դիմագիրք անոր՝ Երուխանի գրչով, գրուած 1908 Հոկտեմբերին՝ ի Պոլիս:

«Ամէն բան արտասովոր, ամէն բան եզրական, ամէն բան իրերամարտ, ամէն բան հակասական այս հայուն մէջ, բայց մեծ, անգոյգ, գմայլեղի, մոգական, բայց ազգային վերջին երեսնամեայ կեանքին մէջ իր դերը գերադրականօրէն հօր եւ անմոռանալի, ազգային մատենագրութեան մէջ իր գործը գրեթէ անհատաւարեղի, ազգային հրապարակագրութեան մէջ իր բաժինը՝ վերանորոգիչի ու հիմնադիր-վարպետի բաժինը, ու աշխարհաբար նոր արձակին մէջ իր հեղինակութիւնը արուեստագէտ կերտիչի հեղինակութիւնը: Այս հայը՝ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ»:




MEMBER

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Կեանքի Ուժը Սեռային Ուժի Մեջ Է



Սեռային ուժը պարտադիր չէ, որ կապուած ըլլայ սեռային յարաբերութեան հետ եւ պարտադիր չէ, որ կուտակուի միայն մասնաձևական մտերմութեան շնորհիւ: Ատրիկա նախ եւ առաջ վայելքի ուժն է: Ուժ, որ կիրնը կը զգայ մասնաձևական կեանքին, կեանքի նիւթական դրսեւորումներէն՝ մարմնական ձեւերու գեղեցկութենէն կամ այն բանէն, ինչ կրնանք տեսնել կամ զգալ՝ սկսեալ սեփական մարմնէն մինչեւ ամառնային անձրեւի գեղեցկութիւնը, հաճոյքը սնունդէն, հագուստէն, որ կը կրենք, եւ այլ շօշափելի ուրախութիւններէ:

Այդ խումբին մէջ կը մտնէ նաեւ դրամը, իբրեւ աշխարհի եւս մէկ նիւթական դրսեւորում: Այդ ուժին շնորհիւ է, որ կիրնը դրամը կը քաշէ դէպի իր կեանք: Ան կրնայ ատիկա ընել ուղղակիօրէն կամ իր տղամարդուն միջոցով: Եթէ տղամարդը քիչ կը շահի, ուրեմն ան կնոջմէ քիչ կը ստանայ նման ուժ: Կիրնը անոր չի լեցնէր ատով:

Տղամարդիկ հոգեւոր էակներ են: Այս կեանքի մէջ անոնք լիովին կրնան գոհանալ բազմոցով եւ հեռատեսիլով: Ձեր իսկ միջոցով է, թանկագին կանայք, որ տղամարդը

կը սորվի ճանչնալ նիւթական աշխարհը, հաճոյք զգալ կեանքէն եւ իրեն համար վերջապէս հասկնալ, թէ այդ գործին մէջ դրամը ինչպէս կրնայ օգնել: Դուք կը հրաժարիք կեանքի նիւթական դրսեւորումներէն: Օրինակ, կ'ըսէք. «Այս եղանակին ինձի նոր մուշտակ պէտք չէ, հինը կը հագուիմ», «այս ինքնաշարժը չափազանց սուղ է, ունեցածէս գոհ եմ», «ես առանց ատոր ալ լաւ կը զգամ», բայց դուք ձեր մէջ կը զգաք, որ, այնուամենայնիւ, վատ պիտի չըլլար գնել այս, կամ այն ու նաեւ այն մէկը:

Ներանձնական առողջ ուժին շնորհիւ տարածութիւններ կը բացուին ստեղծագործական հոսքի համար: Ստեղծագործական կեանքը արարման գործընթաց է: Ձեր պարագային ձեր աշխարհի արարման, այն աշխարհի, որուն մասին կ'երագէք:

Դուք ձեր ճակատագիրը կը կառուցէք այնպէս՝ ինչպէս կ'ուզէք, եւ գայն կը լեցնէք դրականութեամբ եւ երջանկութեամբ: Ի՞նչ ընել եւ ինչէ՞ն սկսիլ: Սկիզբի ընտար պէտք է յարմար գիրք եւ իր պահանջները, չամչնալ եւ ուղիղ խօսիլ անոնց մասին, հաւանաբար դուք ձեր հետ:

Տղամարդիկ Այս Բաները Կ'ընեն Սիայն Սիրելի Կանանց Հետ

Կան բազմաթիւ բաներ, որոնք ուժեղ սեռի ներկայացուցիչները պատրաստ են ընելու միայն այն կանանց հետ, որոնց կը սիրեն:

- 1) Յարաբերութիւններ կը պարզէ- Առաջին հայեացքով տարօրինակ կէտ է: Սակայն ատիկա, իրապէս, այդպէս է: Տղամարդիկ կը բացատրեն, որ, եթէ կնոջ նկատմամբ անտարբեր չեն, ուստի չեն կրնար «ձեռքը շարժել» յարաբերութիւններուն վրայ: Եթէ կան որեւէ անհարթութիւններ, վէճեր, վիրաւորանքներ, ուրեմն տղամարդիկ կը փորձեն զանոնք անմիջապէս կարգաւորել եւ չեն սպասեր, որ բոլոր այդ մանրուքները բաժանման յանգեցնեն:
- 2) Կ'անկեղծանան- Եւ խօսքը ոչ միայն «Ես կը սիրեմ քեզ»-ի մասին է: Սիրող տղամարդը սիրելիի առջեւ կը բանայ ամբողջ հոգին: Ան չի վախար թոյլ, ծիծաղելի կամ յիմար երեւնալէն:
- Սիրելի կնոջ հետ ան իրական է: Որովհետեւ եթէ ո'չ անոր հետ, հապա որո՞ւն:
- 3) Փորձարկումներ կ'ընէ- Անոր համար ոչինչ վանող է: Ան կը սիրէ իր կնոջ մարմնի իւրաքանչիւր հատուածը: Եւ կ'աշխատի անոր հաճոյք պատճառով տարբեր եղանակներով:
- 4) Կը յարգէ սիրելի կնոջ մտերմները- Նոյնիսկ եթէ չի սիր

րեն զանոնք: Եթէ անոնք արժէք ունին իր սիրելիին համար, ուրեմն իրեն համար ալ կը դառնան կարեւոր եւ յարգարժան մարդիկ:

- Ան երբեք չի ստիպել իր կնոջ հրաժարիլ ընտանիքէն, ընտրութեան առաջ չի կանգնեցներ, չ'իջներ անոնց հասցնելուն վիրաւորական խօսքեր հնչեցնելու մակարդակին:
- 5) Հաշուի կը նստի անոր խօսքին հետ- Ան նոյնիսկ կը լսէ սիրելիի ընկերուհիներուն մասին բազմապիսեանքները. չէ՞ որ իրեն համար կարեւոր է այն ամէնը, ինչով կ'ապրի իր կիրնը: Եթէ կնոջ իսկապէս կը սիրէ, ան ստիպուած չ'ըլլար տասը անգամ կրկնելու իր խնդրանքը: Տղամարդը ատիկա կը լսէ առաջին իսկ անգամէն:
- 6) Կը հիանայ իր կնոջմով- Մի'շտ, օրուան բոլոր ժամերուն:
- Ան իր սիրելիին չի համեմատեր գեղեցկուհի կերպարներու եւ դերասանուհիներու հետ, անոր խորհուրդ չի տար նիհարնալու կամ մագերը երկարացելու: Պարզապէս գիրք կը համարէ ամենա-ամենան: Եթէ նոյնիսկ կարմրած են անոր աչքերը կամ կրիփէն քիթը ուռած է:
- 7) Ան կը հպարտանայ- Անգամ ամենափոքր յաջողութեամբ:
- Ան չի նախանձիր, չի փորձեր ըլլալ «աւելի արագ, բարձր, ուժեղ», չի ձգտի կիրնը փակել «ոսկեայ վանդակ»ի մէջ: Ան անկեղծօրէն

Մտքեր, Որոնցմէ Կը Խուսափին Ուժեղ Հոգեբանութիւն Ունեցող Մարդիկ

- Անոնք գուր ժամանակ չեն վատնէր՝ խղճալով իրենց: Վրդովիլ եւ գայրանալ, երբ ամէն ինչ վատ է, բնական է: Սակայն հոգեպէս ամուր մարդիկ վատ իրադրութիւններուն մէջ ուշադրութիւն կը գրաւեն բնականոն վիճակի արագ վերադառնալու եւ առաջ շարժելու ունակութեամբ: Անոնք ժամանակ չեն ծախսեր իրենց ուղեղին մէջ խնդիրները անդադար խմորելու վրայ:

- Անոնք չեն ձգեր ուրիշ մը օգտագործել իրենց տկարութիւնները: Շատ դիւրին է անյաջողութիւններու մէջ ուրիշները մեղադրելու: Սակայն, այս պարագային, դուք ոեւէ մէկուն իշխանութիւն կու տաք «ձեր վրայ»:

- Անոնք չեն փախչիր փոփոխութիւններէն: Փոփոխութիւնները բարդ են, այդ իսկ պատճառով ալ շատ մարդիկ կը պահուրտին անոնցմէ իրենց խեցիին մէջ: Սակայն անյաջողութիւնը կարելի է

օգտագործել իբրեւ փոփոխութիւն՝ տեղափոխուեցէք այլ քաղաք, գտէք այլ աշխատանք:

- Անոնք ժամանակ չեն վատնէր բաներու վրայ, որոնք իրենցմէ կախեալ չեն: Ըստ յոյն փիլիսոփայի մը՝ աշխարհի վրայ գոյութիւն ունի երկու իրավիճակ. անոնք, որոնք մեր վերահսկողութեան տակ են, եւ անոնք, որոնք մեր վերահսկողութեան տակ չեն: Ան կը կարծէր, թէ մարդը պէտք է իր ուշադրութիւնը կեդրոնացնէ միայն անոր վրայ, որ կրնայ վերահսկել, քանի որ «անհասանելի նպատակի ետեւէն վագելով ձախողման դատապարտուած էք»: Այնպէս որ, պէտք չէ անհանգստանալ բանի մը համար, որ ձեզմէ կախեալ չէ:

Ձեզմէ կախեալ է միայն այն, թէ դուք ձեզ ինչպէս կը ներկայացնէք ձեզ շրջապատող աշխարհին: Դուք չէք կրնար ապրիլ լիարժէք կեանքով, եթէ անդադար մտածէք, թէ «ինչպէս ձեզի կը նային միւսները»:

Հետաքրքրական Բացատրութիւն, թէ Ինչու Կը Սիրենք Կրկնփուկը Թէյի մէջ Թաթխել

Կրկնփուկը եւ թէյը կու տան այնքան յարմարաւէտութեան զգացողութիւն, որքան կու տայ բուխերիկին առջեւ գտնուող փափուկ բազմոցը:

Բայց ուրկէ՞ յառաջացած է կրկնփուկը տաք ըմպելիքներու մէջ թաթխելու սովորութիւնը: Կը պարզուի, որ մարդիկ այդպէս ըրած են շատ հին ժամանակներէ: Դարեր առաջ, նաւաստիները առանց կրկնփուկներու նաւ չէին բարձրանար: Կրկնփուկները իտէալական էին երկար ուղեւորութիւններու համար, եւ այդ ժամանակուան հացթուխները կրկնփուկները կը թխէին շատ չոր, որպէսզի ուղեւորութիւններու ժամանակ անոնք չփշրուին: Կրկնփուկները քիչ մը փափկեցնելու համար՝ նաւաստիները զանոնք կը թաթխէին սուրճի կամ աղաջուրի մէջ:

Կրկնփուկները իրենց տեղը գտած են աշխարհի տարբեր




մշակութիւններու մէջ: Այսօր իտալիոյ մէջ համեղ խրթիւրթ ան կրկնփուկներ կը մատուցուի քափուչիտոյի հետ: Հնդկաստանի որոշ շրջաններ քաղցր եւ կծու կրկնփուկներ կը թրջուին թէյի մէջ: ԱՄՆ-ի մէջ տուրմով պատրաստուած կրկնփուկներ կը թաթխեն կաթի մէջ:

Առողջապահութիւն - Նոր Գորոնա Ժահրը

Վերջին տարիներուն մարդկութիւնը ականատես դարձաւ շատ մը նոր տեսակի ժահրերու (virus) ի յայտ գալուն: Անոնցմէ էր sars-ը 2003-ին, mers-ը եւ հին corona ժահրը, որ ի յայտ եկաւ Սէուտական Արաբիոյ մէջ: Սակայն ամենավտանգալորը ցարդ նոր corona ժահրն է, որ ի յայտ եկաւ Դեկտեմբեր 2019-ին Չինաստանի մէջ, որ մեծ ծաւալ ստացաւ 9 Յունուար 2020-էն սկսեալ: Այս ժահրը, ինչպէս հին corona-ն կամ sars-ը, կը հարուածէ շնչառական համակարգը ու առաջը շարունակու պարագային, կը պատճառէ մահ:


Չինաստանի վուհան քաղաքին մէջ եւ շուրջ, ուրկէ սկսաւ այս համաճարակը, ցարդ հիւանդացած են հազարաւոր մարդիկ ու մեռած են մօտ հազար անձ: Չինաստանի կառավարութիւնը արգելած է շրջապայտութիւնը այդ քաղաքներուն մէջ ու մարդիկ կը կրեն դիմակներ,



որովհետեւ ժահրը կը փոխանցուի մարդոց շունչէն եւ դպչելէն: Հիւանդութեան տարածման արգելքը տակաւին չի գործեր պէտք եղածին նման, սակայն արդէն շաններ կան, որ ան սկսած է արդիւնք տալ, վարակուողներու թիւը սահմանափակելով որոշ չափով:

Կ'ուրախանայ, երբ կիրնը որեւէ բանի կը հասնի, կը ձգտի, կ'երագէ: Ան կը սատարէ սիրելիին, կ'օգնէ եւ միշտ կողքին է:

Արթուր Ալեքսանեանը՝ Եւրոպայի Զնգակի Ախոյեան



Օլիմպիական ախոյեան Արթուր Ալեքսանեանը Հռոմում աւարտուող յունահռոմէական ըմբշամարտի Եւրոպայի առաջնութիւնում 97 կգ քաշայինների եզրափակիչում յաղթեց իտալիան ներկայացնող Նիկոլոս Կախելաշվիլին եւ հռչակուեց Եւրոպայի հնգակի ախոյեան:

Եզրափակիչ գոտեմարտում գիւմրեցի ըմբիշը 7:1 հաշուով յաղթեց Նիկոլոս Կախելաշվիլին:

Արթուր Ալեքսանեանը պայքարը սկսել էր 1/8 եզրափակիչից, որտեղ 7:1 հաշուով յաղթեց թուրք Ջենք Իլդեմին, քառորդ եզրափակիչում 9:0 հաշուով վստահ յաղթանակ տարաւ պուլկարացի Կիրիլ Միլովի նկատմամբ: Կիսաեզրափակիչում Ալեքսանեանը ոչ մի շանս չտուեց Ֆինլանդիայի ներկայացուցիչ Մատի էլիաս Կուոսմանենին (8:1):»

Գեորգ Ղարիբեանը Տպաւորիչ Յաղթանակով Զոչակուեց Եւրոպայի Ախոյեան

Իտալիայի մայրաքաղաք Հռոմում ընթացող յունահռոմէական ըմբշամարտի Եւրոպայի առաջնութեան 60 կգ քաշայինների եզրափակիչում Հայաստանի ներկայացուցիչ, երիտասարդների Եւրոպայի ախոյեան Գեորգ Ղարիբեանը գոտեմարտեց երիտասարդների եռակի աշխարհի ախոյեան, թուրք Կերեմ Կամալի հետ եւ յամառ պայքարում 5:5 հաշուով նուաճեց Եւրոպայի ախոյեանի տիտղոսը: Գոտեմարտն աւարտուեց 5:5 հաշուով, բայց քանի որ Գեորգ Ղարիբեանը 4 միաւորանոց գցում ունէր յաղթանակը շնորհուեց հայ ըմբիշին:

Աբրահամ Խաչմանեանը Զեռացաւ Զայաստանի Զաւարականից

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան եւ Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Աբրահամ Խաչմանեանը երկկողմանի համաձայնութեան են եկել պայմանագիրը դադարեցնելու վերաբերեալ:

Որոշումը կայացուել է ՀՖՖ նախագահ Արմէն Մելիքեեկեանի եւ Աբրահամ Խաչմանեանի մի քանի հանդիպումների արդիւնքում:

ՀՖՖ նախագահը շնորհակալութիւն է յայտնել Աբրահամ Խաչմանեանին բարդ իրադրութիւնում հաւաքականի ղեկը ստանձնելու համար եւ յաջողութիւն է մաղթել մարզչական յետագայ կարիերայի ընթացքում, յայտնում է ՀՖՖ մամուլի ծառայութիւնը:

Հայաստանի հաւաքականի նոր գլխաւոր մարզիչի անունը կը յայտարարուի մօտ ապագայում:

Ստամբուլ. Լեւոն Աղասեանն ու Ալեքս Դոնիկեանը՝ Մետալակիրներ

Ստամբուլում անցկացուած Պալքանեան երկրների ձմեռային առաջնութեանը մասնակցել է աթլետիկայի Հայաստանի 16 ներկայացուցիչ:

Եռացատկի մրցաշարում կապանցի Լեւոն Աղասեանը ցոյց է տուել 16.44 մեթր արդիւնք եւ գրաւել երկրորդ տեղը, յայտնում է ՀԱՕԿ լրատուականը:

60 մեթր արագավազքում (8,15 վայրկեան) լաւագոյն եռեակը եզրափակել է Հայաստանի ներկայացնող ամերիկահայ Ալեքս Դոնիկեանը:

Եռացատկի Կանանց Մրցաշարում Երեւանցի Յանա Աբրահամեանը Յոյց է Տուել Չորրորդ Արդիւնքը (13.06 մեթր): Սա Հայաստանի ունկորդ է:

Անձնական ունկորդ է գրանցել (7.47 մեթր) երեւանցի հեռացատկորդ Արտակ Համաբարձումեանը, որը գրաւել է 5-րդ տեղը:



Մոհամետ Սալահը՝ «Լիւերպուլի» Լաւագոյն Խաղացող

«Լիւերպուլի» եգիպտացի յարձակուող Մոհամետ Սալահն այս մրցաշրջանում երկրորդ անգամ ճանաչուել է ախոյեանի անունը լաւագոյն խաղացող: Յունուարին Սալահը մասնակցել է վեց հանդիպման, խփել երեք կոլ, կատարել երկու կոլային փոխանցում:

«Երջանիկ եմ ստանալ այս մրցանակը: Բայց աւելի կարեւոր է յաղթել բոլոր հանդիպումներում եւ շարունակել նոյն ոգով», - Սալահի խօսքը մէջբերում է «Լիւերպուլի» մամուլի ծառայութիւնը:

Սալահն այս մրցաշրջանում լաւագոյն էր ճանաչուել նաեւ 2019թ. Օգոստոսի հանդիպումների արդիւնքում:



«Ռոման» Պարտուեց, Միխթարեանը Մասնակցեց Ամբողջ Խաղին

Իտալիայի առաջնութեան 24-րդ տուրում «Ռոման» պորտուգալացի գլխաւոր մարզիչ Պաուլու Ֆոնսեկայի ղեկավարութեամբ Բերգամոյում մրցեց «Ատալանտայի» հետ եւ պարտութիւն կրեց 1:2 հաշուով:

Առաջին խաղակէսի վերջին րոպէին «Ռոմայի» պոստիացի յարձակուող էդին Զեկոն օգտուեց մրցակցի սխալից եւ գրաւեց «Ատալանտայի» դարպասը:

Սակայն ընդմիջումից յետոյ դաշտի տէրերը կարողացան 9 րոպէում առաջ անցնել հաշուի մէջ՝ հասնելով կամային յաղթանակի: 50-րդ րոպէին աչքի ընկաւ արժենթինացի պաշտպան Խոսէ Պալմիտոն, 59-րդ րոպէին՝ խորուակ կիսապաշտպան Մարիօ Պաշալիչը, որը փոխարինման էր դուրս եկել դրանից մեկ րոպէ առաջ:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» մեկնարկային կազմում էր եւ անցկացրեց ամբողջ հանդիպումը: Նա 27-րդ րոպէին գոլաշարուեց ղեկին քարտով:

«Ատալանտան» 45 միաւորով չորրորդն է, «Ռոման» ունի 39 միաւոր եւ 5-րդ տեղում է:

«Ռեալ» - «Սելտա»՝ 2:2 Մաղրիդցիները Միաւորներ Կորցրեցին

Սպանիայի առաջնութեան 24-րդ տուրում Մադրիդի «Ռեալն» ընդունեց Վիգոյի «Սելտային»: Ֆրանսացի Զինեդին Զիդանի գլխաւորած թիմը միաւորներ կորցրեց՝ 2:2:

Հիւրերը հաշիւը բացեցին արդէն 7-րդ րոպէին: Աչքի ընկաւ ռուսաստանցի յարձակուող Ֆիդոլոր Սմոլովը: Նա առաջին կոլը խփեց նոր թիմում:

«Ռեալը» կոլեր խփեց միայն երկրորդ խաղակէսում: 52-րդ րոպէին գերմանացի կիսապաշտպան Տոնի Կրոսը պրագիլացի պաշտպան Մարսելոյի փոխանցումից յետոյ հաւասարեցրեց հաշիւը: Արքայական թիմի երկրորդ կոլը խփեց աւագ Սերխիօ Թամուրը: Սպանացի պաշտպանը դիպուկ իրացրեց 11 մեթրանոցը, որը վաստակել էր պելզիացի կիսապաշտպան էդեն Ազարը: Նա վնասուածքից յետոյ առաջին հանդիպումն անցկացրեց: Ազարը խաղադաշտ դուրս չէր եկել անցած տարուայ նոյեմբերից:

«Սելտային» պարտութիւնից փրկեց փոխարինման դուրս եկած սպանացի յարձակուող Սանտի Մինայի կոլը 86-րդ րոպէին:

«Ռեալը» 53 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ 1 միաւոր առաջ է երկրորդ տեղում ընթացող ախոյեան «Բարսելոնայից»: «Սելտան» 17-րդն է՝ 21 միաւոր:

Մանչեսթեր Սիթին» Կարող է Զրկուել 2012 եւ 2014 Թուականների Անգլիայի Ախոյեանի Տիտղոսներից

2012-2016 թուականներին ֆինանսական մեքենայութիւնների միջոցով ՈւեՅԱ-ի ֆինանսական «արդար խաղի» կանոնները խախտելու հետեւանքով առաջիկայ երկու տարիներին եւրագաւաթային մրցաշարերի մասնակցութեան իրաւունքից զրկուած «Մանչեսթեր Սիթին» կարող է զրկուել 2014թ. Անգլիայի ախոյեանի տիտղոսից, յայտնում է Daily Mail-ը:

«Մանչեսթեր Սիթին» ախոյեան էր դարձել նաեւ 2012 թուականին, սակայն դեռ յատակ չէ, թէ ՈւեՅԱ-ն այդ տարուայ որ կէսի ֆինանսական տուեալներն է համարել կեղծած: Եթէ պարզուի, որ կեղծիքները վերաբերում են տարուայ առաջին կէսին, ապա մանչեսթերեան ակումբը կարող է զրկուել նաեւ այդ տարուայ ախոյեանական տիտղոսից:



ՄԱՐԱԶԴ



ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆՆԵԱՆ (1952-2020)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրելի ամուսնոջն, հօր, եղբոր, ընկերոջ եւ հարազատին ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆՆԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Փետրուար 13, 2020ին:

Հանգուցեալի թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, Փետրուար 19, 2020ին առաւօտեան ժամը 10:00ին Կլենտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 South Central Avenue, Glendale, իսկ Գերեզմանի կարգը ժամը 11:00ին Forest Lawn գերեզմանատան մէջ 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068:

- Սգակիրներ՝ Տիկ. Ռուզաննա Դողրամաճեան-Խուղանեան, Ջաւահիր՝ Տէր եւ Տիկ. Սարմէն եւ Սելիլ Խուղանեան եւ զաւակը Ջաւահիր՝ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Մելինէ Խուղանեան եւ զաւակը Ջաւահիր՝ Տիգր Լեւոն Խուղանեան, Քոչըր՝ Տէր եւ Տիկ. Դրաստամատ եւ Տոմիկ Ազիզեան եւ զաւակը Քոչըր՝ Տէր եւ Տիկ. Նորայր եւ Սարիկ Յակոբեան եւ զաւակը եւ համայն Խուղանեան, Դողրամաճեան, Ազիզեան, Յակոբեան, Ալաւերտեան, Վարդանեան, Լանտորեան, Նազարփուրեան, Իշոյեան, Եկարեան ընտանիքները եւ հարազատները:

ՄԱՐԱԶԴ



ՏՕՔԹ. ՏԻԳՐԱՆ ՆԱՃԱՐԵԱՆ Ծնեալ Հայէպ Յուլիս 1952

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոջն եւ եղբօր՝ ՏՕՔԹ. ՏԻԳՐԱՆ ՆԱՃԱՐԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Փետրուար 14, 2020ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Փետրուար 21, 2020ին, կէսօրին ժամը 12:00ին Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, 58 S. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107 ապա թաղումը Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Անի Յարութիւնեան Նաճարեան Քոչըր՝ Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Անի Ջանեցեան եւ զաւակները Եղբայր՝ Ռուբէն Նաճարեան եւ զաւակը Տիկ. Ալիս Յարութիւնեան եւ զաւակները Եւ համայն Նաճարեան, Ջանեցեան, Յարութիւնեան, Գուգուեան, Պարսումեան, Գալայճեան, Տանհաշ, Փափազեան, Այն Մալաք, Թարապիշի, Քարտաշեան, Գէորգեան, Ջալապեան, Խոտանեան, Մարլեան, Մակարեան, Քէչէճեան, Մուրատեան եւ Ասուլեան ընտանիքներն ու հարազատները:

Էրտողանը, Լիպիան եւ Արաբական Աշխարհը

Շարունակուած էջ 6-էն

պատճառեց էրտողանին եւ զայն մղեց լքելու համաժողովը՝ նախքան աւարտը: Էրտողանն ու Փուլիինը հակառակ կողմեր են, երբ խօսքը կը վերաբերի Լիպիոյ գոյութեան լաւատեղեակ են, որ հակառակ թուրքիոյ նախագահ էրտողանի պարծենկոտութեան, ան կրնայ ներկայութիւն ըլլալ Սուրիոյ եւ Լիպիոյ մէջ միասն աշխատելու, որ քան իրեն թոյլ կու տայ Մոսկուան:

Օսմանեան կայսրութեան վերջին շրջանին, եւրոպական պետութիւնները եւ Ռուսիան լաւատեղեակ էին, թէ ան իր վախճանին հասած էր արդէն եւ ուղիղակի, եւ տնտեսական առումով կայսրութիւնը պարտքերով ծանրաբեռնուած էր, իսկ զինուորական կարգերը՝ փտած գայտահանգերձ, այդ երկիրները իրենց միջեւ հաւասարակշռութիւնը պահելու համար, որոշ ժամանակով երկարեցին այդ կայսրութեան կեանքը, ինչ որ պատճառ եղաւ երկրի ոչ իսլամ ազգերու բնաջնջման, անոնց կարգին

յատկապէս՝ հայերուն: Պատմութիւնը այսօր ինքզինք կը կրկնէ մեծ պետութիւնները իրենց շահերը կը պաշտպանեն, արեւելեան եւ արեւմտեան երկիրներու քաղաքական հակամարտութիւնները կը մղեն երկու կողմերուն ալ փափուկ քաղաքականութիւն վարելու թուրքիոյ հանդէպ:

Սակայն մինչեւ ե՞րբ: Թուրքիան այդ մեծ երկիրն ու հակայ ուժը չէ՞, որ կրնայ իր երկրէն հեռու եւ ծովէն անդին պատերազմ մղել, Ամերիկայի նման: Այս ճշմարտութիւն է, այնուամենայնիւ, թուրքիոյ վերոյիշեալ արկածախնդրութիւնը կրնայ վերածուիլ արիւնոտ ճահիճի մը, որ երկար պիտի տեւէ: Աւելին, Սաուտի կառավարութիւնը կրնայ թուրքիոյ գործակալը նկատուիլ Լիպիոյ մէջ եւ այդպիսով կորսնցնել միջազգային աջակցութիւնը:

Ի վերջոյ, էրտողան ամենամեծ վնաս կրողը պիտի ըլլայ, եթէ Լիպիոյ բանակի զօրավար իսլամական հաֆթեր տիրանայ կացութեան՝ ուժով թէ այլ կարգադրութեամբ:

Նոր Սերունդի եւ Զ.Ս.Ս.ի Խրախճանքը

Շարունակուած էջ 8-էն

խլեց ներկաներէն: Առանձին մեներգներով ելոյթ ունեցաւ Ն.ՍՄ.Ս.ի ատենապետ Յարութ Տէր Դաւիթեանը: Ան առաջին անգամ ըլլալով երգեց իր յօրինումներէն «Սիրոյ Հարցումներ»ն ու «Անմար Սէր»ը (խօսք եւ երաժշտութիւն Յ.Տ.Դ.ի):

Օրուան յայտագրի երկրորդ մասը պարային բաժինն էր: D.J. Garo-ի իտալական եւ միջազգային ու հայկական եղանակներու զուարթ հնչիւններու ներքեւ, պարահարթակը լեցուցեալ գունազոյգ զոյգե-

րով: Անոնցմէ շատեր բնականաբար կը վերջիշէին իրենց սիրոյ պահերն ու ապագայի վառ հեռանկարները:

Աւարտին տեղի ունեցաւ վիճակահանութիւն: Բազմաթիւ գոյգեր բախտաւորուեցան պէսպիսուն պարգեւներով:

Ուշ երեկոյեան ներկաները բաժնուեցան սրահէն իրենց հետ տանելով եզակի երեկոյթի մը առթած հաճելի տպաւորութիւնները:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները եւ կը մաղթենք որ աւանդութիւն դառնայ այս ինքնուրոյն երեկոյթը:

Դեսպան Բայրուրդեանը Հիւրընկալուեց

Շարունակուած էջ 8-էն

շրջութեան կարողութիւնները:

ՀՀ գլխաւոր հիւպատոսը ներկայացրեց նաեւ Լոս Անջելէսի հետ համագործակցութիւն ծաւալելու մէկ այլ հարթութեան ներուժը՝ մեծաթիւ հայ համայնքի առկայութիւնը: Պայմանաւորութիւն ձեռք բերուեց եւս մէկ միջոցառում կազմակերպել Արեւմտեան Լոս Անջելէսի Առեւտուրի պալատի հետ՝ սեւեռուելով հայկական զինիւնների վրայ:

Արեւմտեան Լոս Անջելէսի Առեւտուրի պալատը հիմնադրուել է 1945 թուականին: 1993 թուականից ընդլայնել է գործունէութիւնը՝ իր մէջ ընդգրկելով նմանատիպ գործունէութիւն ծաւալող մի քանի

այլ կառույցներ՝ այդպիսով դառնալով ոլորտի՝ մեծութեամբ եւ ազդեցութեամբ ամենախոշոր կազմակերպութիւնը Լոս Անջելէսի ամենահարուստ շրջաններից մէկի համբաւը վայելող մասում: Կառույցին այժմ անդամակցում է աւելի քան 2150 գործարար կազմակերպութիւն արեւմտեան Լոս Անջելէսից եւ յարակից շրջաններից: Դեսպան Բայրուրդեանը գոհունակութեամբ փաստեց, որ կազմակերպութիւնն այժմ գործունէութիւնն ընդլայնում է՝ ըստ Լոս Անջելէսի խոշոր համայնքների կարիքների, եւ այդ ուղղութեամբ տարուող աշխատանքներում իր տեղն են գտնում Հայաստանի հետ ձեւաւորուելիք առեւտրային կապերը:

AGBU SATAMIAN THEATRE GROUP logo and contact information for the Satamian Theatre Group, including website and email details.

Advertisement for «Masisa» featuring contact information: «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net



ԴՆՔ արժանի էք հաշուըւելու



Մարդահամարը տեղի պիտի ունենայ այս Գարնան

Մարտի կեսին սկսեալ, կրնանք պատասխանել ինն պարզ հարցումներու,
որպէսզի կարենանք օգնել տեղեկացնելու, թէ մեր համայնքներուն
մէջ, յաջորդ տարի դրամը ինչպէ՛ս պետք է ծախսուի:
Բոլոր հարցումները պաշտպանուած են եւ գաղտնի:

Իմացէք աւելին՝ այցելելով CaliforniaCensus.org կայքը: